

Հավելված
ՀՀ կառավարության 2014 թ.
ապրիլի 30-ի նիստի N 17
արձանագրային որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԻ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2013 թվականի ընթացքում հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2012 թվականի նոյեմբերի 27-ի N 1159-Ա որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2013 թվականի ծրագիրը”, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչությունն (այսուհետ՝ Տեսչություն) իրականացրել է ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսվարող սուբյեկտների կողմից բյուջեի եկամուտների ձևավորմանն ու ծախսերի (ն/թ ֆինանսական ծրագրեր, գնումների գործընթաց) իրականացմանն ուղղված գործունեության, հաշվապահական հաշվառման վարման և բյուջեի կատարման մասին հաշվետվությունների կազմման և ներկայացման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության, արտաբյուջետային միջոցների գոյացմանն ու օգտագործման ճշտության ստուգումներ, ինչպես նաև ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատանքների գնահատում: Իրականացված ստուգումներով ընդգրկվել են նաև պետական և պետական մասնակցության ընկերություններում ՀՀ պետական բյուջեից գումարների հատկացման և ծախսման, ինչպես նաև շահութաբաժինների հաշվարկման և ժամանակին ՀՀ պետական բյուջե վճարման, զուտ շահույթի բաշխման ճշտության հարցերը:

Տեսչության կողմից ստուգումներ և ուսումնասիրություններ են իրականացվել նաև ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականների հիման վրա, որոնք միտված են եղել բացահայտել տնտեսության առանձին ոլորտներում առկա հիմնախնդիրները և պետական ռեսուրսների օպտիմալ օգտագործման պայմաններում գտնել դրանց լուծման լավագույն ուղիները:

Բացի վերը նշված ծրագրային և հատուկ հանձնարարականներով իրականացված ստուգումներից ՀՀ իրավապահ մարմինների հետ համագործակցության շրջանակներում վերջիններիս պահանջով և առաջադրած հարցերի շրջանակներում պետական և մասնավոր կազմակերպություններում իրականացվել են համապատասխան ստուգումներ և տրամադրվել մասնագիտական եզրակացություններ:

Տեսչությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվել է “Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին” ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 11-ի թիվ 1112-Ն որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման հսկողության կարգ”-ով, ՀՀ կառավարության 2010թ. օգոստոսի 19-ի թիվ 1146-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության կանոնադրությամբ, << Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 23.02.2012թ. թիվ 207-Ն որոշմամբ :

**II. 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

- ՀՀ վարչապետի 2012 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1159-Ա որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2013 թվականի ծրագրով” հաշվետու ժամանակահատվածում ավարտվել և ամփոփվել են թվով 29 ստուգումներ, իսկ թվով 1 ստուգում կասեցվել է :

- ՀՀ իրավապահ մարմինների 2012թ. և 2013թ. ներկայացված պահանջով հաշվետու ժամանակահատվածում ավարտվել և ամփոփվել են թվով 29 ստուգումներ՝ այդ թվում թվով 2 ստուգումները 2012թ. ներկայացված պահանջով, 1-ը գաղտնի դրոշմագրով, իսկ թվով 1 ստուգում կասեցվել է :

- ՀՀ վարչապետի հանձնարարականների հիման վրա իրականացվել է թվով 8 ստուգումներ և թվով 20 ուսումնասիրություններ:

Ընդհանուր առմամբ 2013թվականի ընթացքում Տեսչության կողմից իրականացվել և ամփոփվել են թվով 66 ստուգումներ և թվով 20 ուսումնասիրություններ:

Կից՝ ներկայացվում է 2013 թվականի ընթացքում իրականացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ Հաշվետվությունը՝ <<Նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվության օրինակելի ձևը և դրա լրացման ուղեցույցը հաստատելու մասին >> ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1905-Ն որոշմամբ հաստատված ձևաչափով:

- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել նախորդ ժամանակահատվածում ստուգումներով արձանագրված գումարների վերականգնման և/կամ վերաձևակերպման ցուցանիշների բարելավման ուղղությամբ, հսկողություն է

իրականացվել արձանագրված խախտումների, թերությունների և բացթողումների վերացման նպատակով համապատասխան մարմինների կողմից ձեռնարկվող միջոցառումների նկատմամբ:

Արդյունքում, Տեսչության կողմից 2013 թվականի ընթացքում իրականացված աշխատանքներով 2008-2013թթ. արձանագրված գումարներից վերականգնվել է 1,273,690.7 հազ. դրամ և վերաձևակերպվել 1,125,257.2 հազ. դրամ, ընդամենը՝ 2,398,947.9 հազ. դրամ (տես՝ Աղյուսակ 1-ը):

Վերականգնված գումարից 516,381.0 հազ. դրամը վերականգնվել է ՀՀ պետական բյուջե, 744,811.4 հազ. դրամը պակասեցվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորման ենթակա գումարներից, 12,498.3 հազ. դրամը վերականգնվել է կազմակերպությունների հաշվին:

Աղյուսակ 1

ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎ	Վերականգնվել կամ վերաձևակերպվել է				
	Ընդամենը	Վերականգնվել է բյուջե	Պակասեցվել է ֆինանսավորումից	Վերականգնվել է կազմակերպության հաշվին	Հաշվառումով վերաձևակերպվել է
	(հազ. դրամ)				
1	2	3	4	5	6
ԸՆԿԱՄԵՆԸ 2013թ ԸՆԹԱՅՔՈՒՄ	2,398,947.9	516,381.0	744,811.4	12,498.3	1,125,257.2
այդ թվում					
2008թ.	359.8	359.8	-	-	-
2009թ.	7,230.3	4,617.8	1,912.5	-	700.0
2011թ.	20,683.0	19,864.6	-	818.4	-
2012թ.	1,348,977.7	112,255.6	153,498.9	9,837.8	1,073,385.4

2013թ.	1,021,697.1	379,283.2	589,400.0	1,842.1	51,171.8
--------	-------------	-----------	-----------	---------	----------

Մանրամասնելով, պետք է նշել, որ հսկողության արդյունքների հիման վրա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա գումարը պակասեցվել է 744.8 մլն. դրամի չափով և կազմակերպությունները 2013թ. ընթացքում նշված գումարի չափով չեն ֆինանսավորվել: Բյուջե վերականգնված 516.4 մլն դրամից կանխիկ վերականգնումները կազմել են 395.7 մլն դրամ, աշխատանքներով վերականգնումները՝ 99.3 մլն դրամ, ՀՀ պետական բյուջեի հաշվին հարկային մարմինների գծով գրանցված պարտավորությունները՝ 21.4 մլն դրամ:

- Հաշվետու ժամանակահատվածում, բացի վերը նշված աշխատանքներից, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցը մասնակցել է մի շարք պետական և պետական մասնակցությամբ կազմակերպությունների լուծարային հանձնաժողովների աշխատանքներին՝ ընդգրկվելով նշված հանձնաժողովներում որպես ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացնող անդամ:

Հաշվետու ժամանակաշրջանում լուծարային հանձնաժողովների աշխատանքների արդյունքում լուծարվել են թվով 12 կազմակերպություններ, սնանկ ճանաչելու նպատակով թվով 7 ընկերությունների դիմումները ներկայացվել են ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններ: 2013 թվականի ընթացքում ՀՀ կառավարության կողմից ընդունվել են թվով 6 կազմակերպությունների լուծարման մասին որոշումներ:

III. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Ինչպես վերը նշվեց, 2013 թվականի ընթացքում ՀՀ վարչապետի 2012 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1159-Ա որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2013 թվականի ծրագրով” իրականացվել է թվով 29 ստուգումներ: Իրականացված ստուգումներով արձանագրված գումարների վերականգնման կամ վերաձևակերպման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև աղյուսակում (առավել մանրամասն՝ կից հավելված 1-ում).

ՍՏՈՒԳՄԱՆ ՀԻՄՔԸ	Արձանագրվել է	Ենթակա է վերականգնման կամ վերաձևակերպման
	հազ.դրամ	
1	2	3
2013թ. ծրագիր	2,032,946.4	1,816,803.9

Իրականացված ծրագրային ստուգումներով ընդհանուր առմամբ ընդգրկվել են թվով 3 նախարարություններ (ՀՀ արտակարգ իրավիճակների , ՀՀ մշակույթի, ՀՀ կրթության և գիտության նախարարություններ), դրանց ենթակայության կազմակերպություններ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ենթակայության թվով 2 հարկային տեսչություններ և թվով 1 մաքսատուն: Ստուգումներ են իրականացվել նաև ՀՀ մարզերում (ՀՀ Լոռու և Գեղարքունիքի մարզերում)՝ ընդգրկելով թվով 2 մարզպետարաններ, թվով 4 քաղաքային համայնքներ և մարզպետարաններին ենթակա առողջապահական ընկերություններ:

2013թ. ընթացքում թվով 6 գործեր ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն, որոնցից 5-ի գծով հարուցվել են քրեական գործեր, պարասխանասարու պաշտոնատար անձանց առաջադրվել են մեղադրանքներ:

2013թ. ծրագրով նախատեսված ստուգումներից չի իրականացվել թվով 1 ստուգում (հիմքը՝ ՀՀ վարչապետի 28.06.2013թ. N 514-Ա որոշումը) և ևս 1 ստուգում հաշվետու տարվա վերջում կասեցվել է:

Ծրագրային ստուգումներով բացահայտված խախտումներ և թերություններ, դրանց վերացման գծով Տեսչության կողմից տրված առաջարկներ

Ծրագրային ստուգումների համատեքստում անդրադարձ կատարենք Տեսչության կողմից պետական մարմիններում և/կամ դրանց ենթակայության համակարգերում իրականացված առանձին ստուգումների.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

1. <<Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կենտրոնական ապարատի պահպանում>> ծրագիր.

- Նախարարության և նախարարի աշխատակազմերում հաշվապահական հաշվառումը վարվել է ՀՀ կառավարության 1996թ մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 147 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին» Կանոնադրության (այսուհետ Կանոնադրություն) պահանջների խախտումներով: Մասնավորապես, բնաիրային չափանիշների հիման վրա, դրամական արտահայտությամբ գույքի հաշվապահական հաշվառում չի վարվել, գույքի, պարտավորությունների և տնտեսական գործառնությունների հաշվապահական հաշվառում կրկնակի գրանցման եղանակով չի վարվել, «Գրասենյակային նյութեր և հագուստ», «Կենցաղային և հանրային նյութեր», «Տրանսպորտային նյութեր» հոդվածներով ձեռք բերված ապրանքանյութական արժեքների սինթետիկ և վերլուծական (անալիտիկ) հաշվառում չի տարվել, ապրանքանյութական արժեքների հաշվառում գրանցամատյաններում չի տարվել, չեն լրացվել մուտքի և ելքի անդորրագրեր և առանց ծախսը հիմնավորող սկզբնական

փաստաթղթերի առկայության՝ ձևակերպվել են փաստացի ծախսեր: Նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված «Ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշիռ» ձև Հ-7 տարեկան հաշվետվություններում «Նյութեր և պաշարներ» տողը և «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների վերաբերյալ» ձև 4 հաշվետվություններում պահեստավորված միջոցների մնացորդները ներկայացվել են զրոյական:

Նախարարության ստեղծման օրվանից չեն կատարվել գույքագրումներ, այսինքն խախտվել է Կանոնադրության 15-րդ կետը, այն է՝ հաշվապահական հաշվառման և հաշվետվության տվյալների արժանահավատությունը ապահովելու նպատակով կազմակերպությունը անցկացնում է գույքի և ֆինանսական պարտավորությունների գույքագրում: Սույնով խախտվել են նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 02.06.2000թ.-ի «Կազմակերպությունների ակտիվների ու պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին» թիվ 102 հրամանով հաստատված Կարգի 1.5 կետի պահանջները (այն է՝ գույքագրման անցկացումը պարտադիր է տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ՝ հաշվետու տարվա նոյեմբերի 1-ից ոչ շուտ):

Նախարարությունում նյութական արժեքների պահպանության, ընդունման, դուրս գրման հետ անմիջականորեն կապված աշխատողների հետ նյութական պատասխանատվության մասին պայմանագրեր չեն կնքվել (խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 240-րդ հոդվածի պահանջները):

- Առանձին ծախսային հոդվածներով գումարների նախատեսման նպատակով ներկայացված բյուջետային հայտերում թույլ են տրվել ավել հաշվարկների փաստեր, ինչպես նաև հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակները և ներկայացվել են իրական պահանջից ավել գումարներ: Մասնավորապես, «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով բյուջետային հայտերում գումարները հաշվարկվել են ՀՀ կառավարության 29.04.2005թ. թիվ 629-Ն որոշմամբ սահմանված նորմաներով, սակայն հաշվի չեն առնվել, որ առանձին վարչական շենքեր և շինություններ չեն ջեռուցվում և այդ

օբյեկտների համար նախատեսվել են էլեկտրաէներգիայի և ջեռուցման գումարներ: Էլեկտրաէներգիայի ծախսերի հաշվարկներում ծախսեր են նախատեսվել համակարգչային սարքավորումների շահագործման նպատակով, սակայն հիմնական միջոցների (այդ թվում համակարգիչների և այլն) հաշվապահական հաշվառման բացակայության հետևանքով ստուգմամբ վերը նշված ծախսերը չեն հիմնավորվել:

- Նախարարության և նախարարի աշխատակազմերում ապրանքանյութական արժեքների հաշվառումը և ծախսագրումները տարվել են անտեսելով Կանոնադրության պահանջները, 2010-2012թթ. մատակարար կազմակերպություններից <<Գրասենյակային նյութեր և հագուստ>>, <<Կենցաղային և հանրային սննդի նյութեր>>, <<Տրանսպորտային նյութեր>> հողվածներով ընդամենը 64431.4 հազ. դրամ գումարով ապրանքանյութական արժեքները նախարարությունում չեն մուտքագրվել, չի տարվել դրանց անալիտիկ հաշվառում: Այդ պայմաններում առանց ծախսը հիմնավորող սկզբնական փաստաթղթերի առկայության ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված <<Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին>> ձև 2 հաշվետվություններում ներկայացվել որպես փաստացի ծախսեր:

2. <<Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ>> ծրագրով ՀՀ կառավարության 24.08.2006թ. <<ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 1422-ն և ՀՀ կառավարության 16.10.2008թ. <<ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 1243-ն որոշումների պահանջների խախտմամբ թույլ է տրվել գործուղման ծախսերի ավել վճարումներ՝ գումարով 511.0 հազ. դրամի:

3. <<Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում>> ծրագիր.

- <<Էներգետիկ ծառայություններ>> հողվածով բյուջետային հայտերում ընդգրկված գումարները չեն հիմնավորվել ՀՀ կառավարության 28.04.2005թ. <<ՀՀ պետական

մարմինների գծով ՀՀ պետական բյուջեի նախագծում բյուջետային ծախսերի առանձին տեսակների՝ ջեռուցման, վառելիքի և էլ.էներգիայի ձեռք բերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին»>> թիվ 629-Ն որոշմամբ հաստատված նորմաներով:

- <<Աշխատանքի վարձատրություն>> հոդվածով փաստացի ծախսերի կատարման ընթացքում անտեսվել է ՀՀ կառավարության 18.01.2002թ. <<ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին>> թիվ 48 որոշմամբ հաստատված կարգի պահանջները և տնտեսված միջոցները տարեվերջին ՀՀ պետական բյուջե փոխանցելու փոխարեն կատարվել է փաստացի ծախսերի համեմատ ավել դրամարկղային ծախս, արդյունքում մշտապես գոյացել են չհիմնավորված դեբիտորական պարտքեր (01.01.2013թ. դրությամբ <<Աշխատանքի վարձատրություն>> հոդվածով գոյացել է 14137.8 հազ դրամի դեբիտորական պարտք):

- Հայաստանի փրկարար ծառայության պահեստից մարզային փրկարար վարչություններին ելքագրված վառելիքի և <<Տեխնիկայի սպասարկման և վերանորոգման>> բազային բաց թողնված քսայուղի ու ավտոպահեստամասերի քանակություններն ամբողջությամբ ձևակերպվել են ծախսերով, սակայն համաձայն մարզային փրկարար վարչությունների և <<Տեխնիկայի սպասարկման և վերանորոգման>> բազայի կողմից ներկայացված հաշվետվությունների՝ վերջիններիս մոտ մշտապես մնացել են մնացորդներ՝ պահեստավորված միջոցների մնացորդները 01.01.2013թ. դրությամբ կազմել են 15631.6 հազ. դրամ:

- Անտեսվել է ՀՀ կառավարության 18.01.2002թ. թիվ 48 որոշմամբ հաստատված <<ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին>> կարգի 47-րդ կետի (այն է՝ <ՀՀ Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն պետական կառավարման մարմինների ղեկավարներին տրված իրավասության սահմաններում բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով նախատեսված հատկացումների միջհոդվածային վերաբաշխումները նախապես համաձայնեցվում են ՀՀ ֆինանսների նախարարության հետ՝ վերջինիս կողմից սահմանված կարգով) պահանջները 2010-2012թթ. <<Կենսաթոշակի անցնելու հետ

կապված և տարիքային նպաստներ բյուջեից» հոդվածով ՀՀ պետական բյուջեում նախատեսված գումարներից ավել կատարվել են 16887.1 հազ. դրամի ծախսեր, որոնք ֆինանսավորվել են <Աշխատանքի վարձատրություն> ծախսային հոդվածով նախատեսված գումարների հաշվին՝ առանց ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 24.07.2002թ թիվ 561-Ն հրամանով սահմանված կարգով միջհոդվածային վերաբաշխումները կատարելու: Նախատեսված ծախսերից ավել 16887.1 հազ. դրամի փաստացի ծախսերը ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված <<Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին>> ձև 2 հաշվետվություններում ցույց չեն տրվել՝ ավել կատարված ծախսերը ձևակերպվել են <<Աշխատանքի վարձատրություն>> ծախսային հոդվածով:

4. <<ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ>> ծրագիր.

Նախարարության աշխատակազմի պետական հակահրդեհային տեսչությունում տեսչական բարեփոխումների հայեցակարգով նախատեսված ռիսկի վրա հիմնված ստուգումների ներդրումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 2011թ մայիսի 5-ի թիվ 549-Ն որոշմամբ 2011թ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախարարությանը հատկացված գումարի հաշվին ձեռք են բերվել 3300 լիտր բենզին, 3025 կգ A4 ֆորմատի թուղթ և գրենական պիտույքներ ընդամենը 3741.4 հազ. դրամի, սակայն անտեսելով ՀՀ կառավարության 1996թ մայիսի 2-ի <<Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին>> թիվ 147 որոշմամբ հաստատված կանոնադրության պահանջները, ստացված ապրանքանյութական արժեքները նախարարությունում չեն հաշվառվել (մուտքագրվել) և առանց ծախսը հիմնավորող սկզբնական փաստաթղթերի առկայության ձևակերպվել են որպես փաստացի ծախսեր:

Առաջարկվել է.

1. Հաշվապահական հաշվառումը վարել ՀՀ կառավարության 1996թ մայիսի 2-ի <<Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին>> թիվ 147 որոշմամբ հաստատված <<ՀՀ-

ում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին» Կանոնադրության պահանջներին համապատասխան, մասնավորապես.

- Գույքի, պարտավորությունների և տնտեսական գործառնությունների հաշվապահական հաշվառումը վարել կրկնակի գրանցման եղանակով:

- Ապրանքանյութական արժեքների համար վարել սինթետիկ և վերլուծական (անալիտիկ) հաշվառում, բացառել ապրանքանյութական արժեքների դուրս գրումները առանց ծախսը հաստատող սկզբնական փաստաթղթերի առկայության:

- Ղեկավարվել «ՀՀ-ում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին» Կանոնադրության և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 02.06.2000թ.-ի «Կազմակերպությունների ակտիվների ու պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին» թիվ 102 հրամանով հաստատված կարգի պահանջներով և տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ պարտադիր անցկացնել ակտիվների ու պարտավորությունների գույքագրումներ:

2. Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջը՝ նախարարությունում նյութական արժեքների պահպանության, ընդունման, դուրս գրման հետ անմիջականորեն կապված աշխատողների հետ կնքել նյութական պատասխանատվության մասին պայմանագրեր:

3. ՀՀ կառավարության 1996թ մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 147 որոշմամբ հաստատված կանոնադրության պահանջների խախտմամբ «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կենտրոնական ապարատի պահպանում» ծրագրով «Գրասենյակային նյութեր և հագուստ», «Կենցաղային և հանրային սննդի նյութեր», «Տրանսպորտային նյութեր» հոդվածներով ծախսագրված 64431.4 հազ. դրամի և «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրով 3741.4 հազ. դրամի ընդամենը 68172.8 հազ. դրամի ծախսերը հիմնավորել օրենսդրության պահանջներին համապատասխան

ձևակերպված հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերով, իսկ չհիմնավորված գումարները վերականգնել ՀՀ պետական բյուջե:

4. ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման նպատակով բյուջետային հայտերում գումարների պահանջ ներկայացնելիս ղեկավարվել համապատասխան օրենսդրական ակտերի պահանջներով, մասնավորապես՝ «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով գումարների հայտ ներկայացնելիս ղեկավարվել ՀՀ կառավարության 29.04.2005թ. «ՀՀ պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների՝ ջեռուցման, վառելիքի և էլ.էներգիայի ձեռք բերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» թիվ 629-Ն որոշմամբ: Հաշվի առնել նաև նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և թույլ չտալ իրական պահանջից ավել գումարների նախատեսումներ: ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից գումարների հատկացման նպատակով ներկայացնել պահանջվելիք գումարների հիմնավորված հաշվարկներ:

5. Թույլ չտալ փաստացի ծախսերի համեմատ ավել դրամարկղային ծախսեր կատարելու դեպքեր և ՀՀ կառավարության 18.01.2002թ «ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» թիվ 48 որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխան բյուջետային միջոցների տարեվերջյան մնացորդները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

6. «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» ծրագրով գումարների ծախսման ընթացքում ղեկավարվել ՀՀ կառավարության 24.08.2006թ. «ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1422-Ն և ՀՀ կառավարության 16.10.2008թ «ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1243-Ն որոշումների պահանջներով: «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» ծրագրով արձանագրված 511.0 հազ. դրամը վերականգնել ՀՀ պետական բյուջե:

7. Այսուհետ շինվերանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում ղեկավարվել ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.04.98թ-ի <Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը> թիվ 44 հրամանով հաստատված հրահանգի պահանջներով և աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացման նպատակով համապատասխան կազմակերպության հետ կնքել համապատասխան պայմանագիր:

8. Ապահովել 2013թ ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորումից ստուգմամբ արձանագրված գումարների նվազեցումները:

9. Խիստ հսկողություն սահմանել մատակարար կազմակերպությունների կողմից պայմանագրերով նախատեսված ժամկետներում ապրանքների մատակարարումն ապահովելու ուղղությամբ, ապահովել հաշվարկված տույժի գանձումն ու վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

10. <<Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում>> ծրագրով ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացվող <<Հիմնարկի դերիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին>> 2013թ. 1-ին եռամսյակի ձև 4 հաշվետվությունում 01.01.2013թ. դրությամբ դերիտորական պարտքերի ու պահեստավորված միջոցների մնացորդները ավելացնել 16924.1 հազ. դրամով, այդ թվում <<Վարչական սարքավորումներ>> հոդվածով դերիտորական պարտքը՝ 1292.5 հազ. դրամով, պահեստավորված միջոցների մնացորդները՝ 15631.6 հազ. դրամով:

11. ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծախսերի կատարման ընթացքում պահպանել ՀՀ կառավարության 18.01.2002թ. թիվ 48 որոշմամբ հաստատված <<ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին>> կարգի պահանջները և միջհոդվածային վերաբաշխումները նախապես համաձայնեցնել ՀՀ ֆինանսների նախարարության հետ՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 24.07.2002թ թիվ 561-Ն հրամանով նախատեսված կարգով:

<<Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն>> ՊՈԱԿ

1. ՀՀ պետական բյուջեում «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ծրագրի գծով բյուջետային հայտերում գումարների պահանջը ներկայացվել է իրական պահանջից ավել և արդյունքում ՀՀ պետական բյուջեում (սակ ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագրերում) նախատեսված գումարների մի զգալի մասը 2010-2012թթ. չի ծախսվել: Ընդհանուր առմամբ 2010-2012թթ. ՀՀ պետական բյուջեում և ՊՈԱԿ-հետ կնքված պայմանագրերում նախատեսված գումարներից չի ծախսվել 145990.5 հազ. դրամ, որից 121829.5 հազ. դրամը ուղղվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող այլ բյուջետային ծրագրերի ֆինանսավորմանը՝ հիմնականում նախարարության վարչական շենքի հիմնանորոգմանը, 24161.0 հազ. դրամը 01.01.2013թ. դրությամբ մնացել է ՊՈԱԿ-ի հաշվարկային հաշվում:

2. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրերով սահմանվել է, որ ՊՈԱԿ-ը պարտավոր է պայմանագրի շրջանակներում ստացված ֆինանսական միջոցները օգտագործել միայն «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ծրագրի աշխատանքների իրականացման համար, սակայն անտեսելով նշված պահանջը ՊՈԱԿ-ի կողմից 2010թ.-2011թթ կատարվել են 702.0 հազ. դրամի ծախսեր, որոնք կապ չունեն «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ծրագրի աշխատանքների իրականացման հետ, մասնավորապես, 2010թ.-2011թթ. ընթացքում թվով 4 դեպքով, որպես ուսման վարձ տարբեր ուսումնական հաստատությունների փոխանցվել է 702.0 հազ. դրամ:

3. Բացահայտվել են ՀՀ կառավարության 29-ը դեկտեմբերի 2005թ-ի թիվ 2335-Ն որոշման պահանջների անտեսմամբ գործուղման ծախսերի դիմաց ավել փոխհատուցումների փաստեր:

4. Դեռևս անբավարար է հսկողությունը ապրանքանյութական արժեքների պահպանման նկատմամբ: Ընտրանքային կարգով միայն երկու նյութական պատասխանատու անձանց մոտ կատարված շինանյութերի գույքագրումներով արձանագրել է 218.9 հազ. դրամի պակասորդ և 67.3 հազ. դրամի ավելցուկ:

Առաջարկվել է.

1. ՀՀ պետական բյուջեում «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ծրագրի գծով գումարների բյուջետային հայտերում գումարների պահանջ ներկայացնելիս թույլ չտալ իրական պահանջից ավել գումարների նախատեսման դեպքեր:

2. Հաշվի առնելով, որ 2011-2012թթ. պետական բյուջեում «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ծրագրի գծով նախատեսված գումարներից յուրաքանչյուր տարի նվազագույնը 30000.0 հազ. դրամը ծրագրի իրականացման նպատակով չի ծախսվել և ուղղվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող այլ բյուջետային ծրագրերի ֆինանսավորմանը, միաժամանակ ծրագրի գծով ֆինանսավորված գումարներից յուրաքանչյուր տարի ավելի քան 10000.0 հազ. դրամ կուտակելով ՊՈԱԿ-ի հաշվարկային հաշվում.

- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2013թ. հունվարի 15-ին կնքված պայմանագրային գումարը նվազեցնել 30000.0 հազ. դրամով:

- Հաշվարկային հաշվի 01.01.2013թ.-ի դրությամբ 24161.0 հազ. դրամի մնացորդը փոխանցել ՀՀ պետական բյուջե:

3. ՀՀ պետական բյուջեից ստացված ֆինանսական միջոցները օգտագործել միայն «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ծրագրի աշխատանքների իրականացման նպատակով, բացառել այդ գումարների հաշվին ոչ նպատակային ծախսեր կատարելու դեպքերը:

4. ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարների հաշվին <Գործողման ծախսեր> հոդվածով վճարումների իրականացման ընթացքում խստորեն ղեկավարվել ՀՀ Կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով:

5. Բացառել ՊՈԱԿ-ի ավտոմեքենաների շահագործումը առանց ուղեգրերի լրացման, ավտոմեքենաները շահագործել պատշաճ լրացված ուղեգրերի հիման վրա:

6. Խիստ հսկողություն սահմանել ապրանքանյութական արժեքների պահպանման նկատմամբ: Գույքագրման արդյունքներով արձանագրված 218.9 հազ. դրամ պակասորդի

գումարը գանձել մեղավոր անձանցից և վերականգնել ՊՈԱԿ-ի հաշվին, իսկ 67.3 հազ. դրամի ավելցուկը մուտքագրել պահեստ:

<<Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն>> ՊՈԱԿ

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՊՈԱԿ-ի միջև սեյսմիկ ռիսկի կանխատեսման, գնահատման և նվազեցման նպատակով յուրաքանչյուր տարվա համար կնքվել են համապատասխան պայմանագրեր, որոնցով սահմանվել է, որ հաշվետու տարվա վերջում չծախսված միջոցները ենթակա են վերադարձման: Սակայն անտեսելով նշված պահանջը ՊՈԱԿ-ը 2009թ-ի արդյունքներով չծախսված 1699.8 հազ. դրամը չի վերադարձրել ՀՀ պետական բյուջե: Բացի այդ, հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարների տարեվերջի չծախսված միջոցների հաշվին առանձին ծախսային հոդվածներով թույլ են տրվել փաստացի ծախսերի համեմատ ավել դրամարկղային ծախսեր, առաջացնելով դեբիտորական պարտքեր:

ՀՀ կառավարության 24 դեկտեմբերի 2003 թվականի <<ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին>> թիվ 1937-Ն որոշմամբ սահմանվել է, որ սուբսիդիայի տրամադրման պայմանագրի շրջանակներում ՊՈԱԿ-ի և տվյալ ոլորտը կարգավորող պետական մարմնի ղեկավարի կողմից ստորագրվում է հանձնման-ընդունման ակտ, սակայն անտեսելով նշված պահանջը Նախարարությունը 2010թ-ին առանց համապատասխան հանձնման – ընդունման արձանագրությունների կնքման ՊՈԱԿ-ին վճարել է ընդհանուր գումարով 59650.0 հազ.դրամ:

2. ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանվել է, որ ՊՈԱԿ-ի եկամուտներն ու ծախսերը նախատեսվում և օգտագործվում են սահմանված կարգով հաստատված նախահաշվին համապատասխան, սակայն անտեսելով նշված պահանջը ՊՈԱԿ-ը 2010թ-ի համար չի կազմել և սահմանված կարգով չի հաստատել ծախսերի նախահաշիվ, 2011-2012թթ. տարեկան ծախսերի նախահաշիվների նկատմամբ դրամարկղային և փաստացի ծախսի շեղումների գծով (մի շարք հոդվածների գծով թերաձախս կամ գերաձախս) ՊՈԱԿ-ը

փոփոխված նախահաշիվները չի ներկայացրել Նախարարության հաստատմանը, իսկ 2012թ-ի համար ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարն ավելացվել է 1985.0 հազ. դրամով և համապատասխան փոփոխություններ նախահաշվով չեն իրականացվել:

ՊՈԱԿ-ի նախահաշիվներով կապիտալ ծախսեր նախատեսված չլինելու պայմաններում ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին ձեռք է բերել ընդհանուր գումարով՝ 2499.8 հազ. դրամի հիմնական միջոցներ, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ կառավարության 24 դեկտեմբերի 2003 թվականի «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշման պահանջները:

3. Նախարարության կողմից հաստատված նախահաշվից շեղումներով ծախսերի կատարման պատճառների ստուգմամբ պարզվել է, որ դրանք հիմնականում հետևանք են այն հանգամանքի, որ նախահաշվի կազմման ընթացքում հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի դինամիկան և նախատեսվել են ավել գումարներ, արդյունքում ստուգմամբ առաջարկվել է էներգետիկ և հեռախոսակապի ծառայությունների հոդվածներից 2013թ. նախահաշվից պակասեցնել ընդամենը 3031.1 հազ. դրամ:
4. ՊՈԱԿ-ի կողմից 2010-2012թթ. ընթացքում կատարվել է շուրջ 68545.0 հազ. դրամի գնումներ: Սակայն չպահպանելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջները, գնման առարկայի գնման գինը գերազանցելով գնումների բազային միավորը, իրականացվել է բանակցային ընթացակարգով գնումների կազմակերպում:
5. ՊՈԱԿ-ի կողմից 2010-2011թթ. ընթացքում իրականացվել է 23447.0 հազ. դրամի շինարարական աշխատանքներ, որոնց ընթացքում չեն կազմվել կատարված աշխատանքների վերաբերյալ կատարողական ակտեր, նյութաձախսի հաշվետվություններ, աշխատանքների ընդունման – հանձնման արձանագրություններ, ինչպես նաև սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթեր: Բացի այդ, ՊՈԱԿ-ի կողմից նշված շին. աշխատանքներն իրականացվել են առանց համապատասխան

մրցույթներ անցկացնելու, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջները:

Առաջարկվել է.

1. ՊՈԱԿ-ի գործունեությունը համապատասխանեցնել գործող օրենքների, իրավական ակտերի և ՊՈԱԿ-ի կանոնադրության պահանջներին:
2. Ապահովել ստուգման արդյուքներով արձանագրված գումարների վերականգնումը, իսկ էլեկտրաէներգիայի և կապի ծառայությունների գծով 2013թ-ին նախահաշվով ավել նախատեսված գումարները 2013թ. բյուջեի նախահաշվից պակասեցնել:
3. Այսուհետ սուբսիդիայի պայմանագրեր կնքելիս և վերջինիս շրջանակներում ՊՈԱԿ-ի կողմից ծախսեր իրականացնելու ընթացքում խստորեն պահպանել ՀՀ կառավարության 24 դեկտեմբերի 2003 թվականի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման» կարգի պահանջները:
4. Գնումների գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

"Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայություն" ՊՈԱԿ

1. ՊՈԱԿ-ը ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել է «ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցում» բյուջետային ծրագրով: Ծրագրի իրականացման նպատակով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2010-2012թթ. համար կնքված պայմանագրերով ՊՈԱԿ-ը պարտավորվել է հաշվետու տարվա վերջում ՀՀ պետական բյուջեից հատկացված սուբսիդիայի չձախսված միջոցները վերադարձնել ՀՀ պետական բյուջե: Սակայն անտեսելով նշված պահանջը չձախսված դրամական միջոցների մնացորդից 1730.5 հազ. դրամը ՀՀ պետական բյուջե վերադարձնելու փոխարեն որպես տնտեսված գումար վճարվել է աշխատողներին որպես պարգևատրում, ընդ որում նշված վճարման արդյունքում աշխատավարձի հոդվածով գոյացել է 1873.0 հազ. դրամի գերաձախս:

ՀՀ պետական բյուջե չի վերադարձվել նաև ՀՀ պետական բյուջեից հասկացված և չծախսված դրամական միջոցների հաշվարկային հաշվում առկա մնացորդը:

2. ՊՈԱԿ-ի ծախսերի նախահաշվի կազմման և հաստատման ընթացքում հաշվի չեն առնվել նախորդ տարիների ծախսերի դինամիկան և առանձին ծախսային հոդվածներով թույլ են տրվել ավել նախատեսումների փաստեր: Մասնավորապես, <<Տրանսպորտային ծախսեր>> հոդվածով 2010-2012թթ. առավելագույնը 2012թ-ին 4752.5 հազ. դրամ փաստացի ծախսի պայմաններում 2013թ. համար նախատեսվել է 5500.0 հազ. դրամ:

3. ՊՈԱԿ-ի հաշվեկշռում հաշվառված են թվով 8 ավտոմեքենաներ, որից թվով չորս ավտոմեքենաներն անսարք են և չեն շահագործվում: ՊՈԱԿ-ում թվով 4 ավտոմեքենաների շահագործման նպատակով 2010-2012թթ. դուրս է գրվել 9135.0 հազ. դրամի վառելանյութ (բենզին և սեդված գազ), սակայն դուրս գրումները կատարվել են առանց բավարար հիմքերի, ուղեգրերում մեքենաների կատարած վազքը և վազքաչափի մնացորդները լրացվել են կամայական թվերով առանց հաշվի առնելու ավտոմեքենաների վազքաչափի ցուցիչների իրական տվյալները (շահագործվող 4 ավտոմեքենաների արագաչափերը՝ վազքաչափի ցուցիչները չեն աշխատում): ՊՈԱԿ-ի ՌԻԱԶ-469 մակնիշի ավտոմեքենան վերանորոգման մեջ գտնվելու պատճառով 2012թ. նոյեմբեր ամսից չի շահագործվել, սակայն 2012թ. դեկտեմբեր և 2013թ. փետրվար ամիսներին նշված ավտոմեքենայի համար լրացվել են ուղեգրեր և անհիմն կարգով դուրս է գրվել 170լ. բենզին գումարով 81.6 հազ. դրամի, որը օգտագործվել է տնօրենի անձնական մեքենայի շահագործման նպատակով:

4. Անտեսելով ՀՀ կառավարության 29-ը դեկտեմբերի 2005թ-ի թիվ 2335-ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները ՊՈԱԿ-ի թվով 68 աշխատակիցների 1 օրով գործուղման համար վճարվել է նաև օրապահիկ :

5. ՊՈԱԿ-ը 2010-2012թթ. նախահաշիվների կատարման ընթացքում թույլ է տվել հաստատված նախահաշիվների համեմատ փաստացի ծախսերի կատարման բազմաթիվ շեղումներ, դրանով իսկ խախտելով ՊՈԱԿ-ի կանոնադրության 49-րդ կետի պահանջները, այն է՝ կազմակերպության եկամուտները և ծախսերը նախատեսվում և օգտագործվում են սահմանված կարգով հաստատված տարեկան ծախսերի նախահաշվին համապատասխան:

6. ՊՈԱԿ-ի կարիքների համար 2010-2012թթ. ապրանքանյութական արժեքների (բենզին, սեղմված գազ, տնտեսական և գրասենյակային նյութեր, համակարգչային սարքավորումներ և այլն) ընդամենը գումարով 20554.2 հազ. դրամի ձեռք բերումներն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով, չեն կիրառվել գնման ընթացակարգեր:

Առաջարկվել է.

1. Ապահովել սուբսիդիայի տրամադրման պայմանագրի խախտմամբ ՀՀ պետական բյուջե չվերադարձված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

2. 2013թ. սուբսիդիայի հաշվին իրականացվող ծախսերի նախահաշվից նվազեցնել <<Տրանսպորտային ծախսեր>> հոդվածով նախորդ տարիների համեմատ ավել գումարը տարելերջյան մնացորդը վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. Ապահովել ավտոմեքենաների շահագործման նպատակով դուրս գրված 9135.0 հազ. դրամի վառելանյութի անհիմն ծախսված գումարների, այդ թվում անհիմն կարգով դուրս գրված 170 լիտր բենզինի գումարի՝ 81.6 հազ. դրամի վերականգնումը ՀՀ պետական բյուջե: Պարզել շահագործվող 4 ավտոմեքենաների վազքաչափի ցուցիչների չաշխատելու և այդ պայմաններում նույն ցուցիչների հիման վրա ստուգվող ժամանակահատվածի ընթացքում համապատասխան ուղեգրերի հիմքով անհիմն վառելանյութ դուրս գրելու պատճառները և համապատասխան պատասխանատու պաշտոնատար անձանց ենթարկել պատասխանատվության:

4. ՊՈԱԿ-ի աշխատակիցների գործուղման ծախսերի փոխհատուցումներն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով:

5. Կազմակերպության կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերումներն իրականացնել բացառապես <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

6. Ձեռնարկել միջոցառումներ ՊՈԱԿ-ի կանոնադրության 49-րդ կետի պահանջների պահպանման ուղղությամբ, կազմակերպության փաստացի ծախսերն իրականացնել

հաստատված նախահաշիվներով, թույլ չտալ նախահաշվի առանձին ծախսային հոդվածներից շեղումներ: Նախահաշիվները կազմելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի դինամիկան:

ՀՀ մշակույթի նախարարություն

1. ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի պահպանման առանձին ծախսային հոդվածներով թույլ են տրվել գերածախսեր, որոնք հանգեցրել են կրեդիտորական պարտքերի հետևաբար նաև պետական բյուջեի համար լրացուցիչ պարտավորությունների գոյացմանը:

Անտեսվել են ՀՀ կառավարության 18.01.2002թ. «ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» թիվ 48 որոշմամբ հաստատված կարգի պահանջները և տնտեսված միջոցները տարեվերջին ՀՀ պետական բյուջե փոխանցելու փոխարեն կատարվել է փաստացի ծախսերի համեմատ ավել դրամարկղային ծախս, արդյունքում ձևավորվել են արհեստական դեբիտորական պարտքեր: Ավելին Նախարարության տնտեսված միջոցներից 2051.0 հազ. դրամը տարեվերջին ՀՀ պետական բյուջե վերադարձնելու փոխարեն փոխանցվել է «Փայլ» իրավաբանական գրասենյակ Հայ – ռուսաստանյան համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ին, որից 916.0 հազ. դրամի ծառայությունները ՍՊԸ-ն չի մատուցել և գումարը չի վերադարձրել:

2. «Ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիսթեմս Էյջի» ընկերության կողմից Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի և Արամ Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիկ համերգասրահի տեխնիկական վերազինում» վարկային ծրագրի շրջանակներում ապրանքների ձեռք բերումների և տեղադրումների աշխատանքները ամբողջությամբ ավարտվել են, սակայն Նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված հաշվետվություններով փաստացի ծախսերը չեն ձևակերպվել, ավելին «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ում նույնպես համապատասխան հաշվապահական հաշվառմամբ չեն ձևակերպվել և հաշվեկշռում չեն արտացոլվել:

3. «Հայկական տպագրության 500-ամյակ»», «Երևանը՝ 2012թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք»», «Աջակցություն գրականության հրատարակմանը»», «Գրականության հրատարակում»», «Մշակութային միջոցառումներ»» ծրագրերի իրականացման նպատակով կնքված պայմանագրերով պայմանագրային գումարների վճարումները հիմնականում նախատեսվել և իրականացվել են կանխավճարի ձևով, սակայն կատարման ժամկետներն առանց բավարար հիմնավորումների նախատեսվել են հաջորդ տարիներին: Նշված հանգամանքը հանգեցրել է բյուջետային միջոցների հաշվին էական չափերի դեբիտորական պարտքերի առաջացմանը: Միայն «Հայկական տպագրության 500-ամյակ»», «Երևանը՝ 2012թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք»» ծրագրով ՀՀ պետական բյուջեից թվով 218 պայմանագրերով կազմակերպություններին վճարված 1.579.391,8 հազ. դրամից, թվով 131 պայմանագրերի գծով, որոնց գործողության ժամկետներն ավարտված են, գոյացել է 1.187.520,7 հազ. դրամի դեբիտորական պարտքեր:

Վերոնշյալ ծրագրերով կազմակերպությունների հետ կնքված դրամաշնորհի հատկացման պայմանագրերում նախատեսվել են պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարման ժամկետի խախտման համար տույժեր, սակայն տույժեր չեն հաշվարկվել և չեն գանձվել:

4. «Հուշարձանների վերանորոգում և վերականգնում»» և «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ»» ծրագրերով կատարված շինվերանորոգման աշխատանքների իրականացման համար կազմված նախահաշիվների փաստաթղթային ստուգմամբ և հսկիչ չափագրումներով արձանագրվել են բյուջետային միջոցների ավել վճարումներ՝ ընդամենը 7757.2 հազ. դրամի:

«Հուշարձանների վերանորոգում և վերականգնում»» ծրագրով հուշարձանների վերանորոգման աշխատանքների նախահաշիվներում թույլ է տրվել ավել հաշվարկների դեպքեր: Հաշվի առնելով, որ նշված աշխատանքները դեռևս չեն ավարտվել առաջարկվել է արձանագրված գումարով նվազեցնել հուշարձանների վերանորոգման մնացորդային աշխատանքների նախահաշվից և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա գումարից:

Մեկ հուշարձանի վերանորոգման գծով խախտելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 741 հոդվածի պահանջները՝ նախահաշվով նախատեսված ծավալներից ավել՝ առանց մասնագիտական եզրակացության կատարվել և ՀՀ պետական բյուջեից վճարվել է 7012.3 հազ.դրամի աշխատանքներ:

5. Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված գովազդային նյութերի և հուշանվերների պատրաստման նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից <<Կամերային երաժշտության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ին հատկացված գումարների հաշվին կատարվել է 1552.0 հազ. դրամի անհիմն ծախս, բացի այդ ձեռքբերված ապրանքանյութական արժեքներից 2081.0 հազ. դրամի ապրանքներ ՊՈԱԿ-ում չի մուտքագրվել:

Առաջարկվել է.

1. Ղեկավարվել յուրաքանչյուր տարվա <<ՀՀ պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով և թույլ չտալ ՀՀ պետական բյուջեում նախատեսված գումարներից ավել փաստացի ծախսեր կատարելու դեպքեր, որոնք հանգեցնում են կրեդիտորական պարտքերի գոյացմանն ու հաջորդ տարիներին ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա լրացուցիչ պարտավորությունների առաջացմանը:

2. Ղեկավարվել ՀՀ կառավարության 18.01.2002թ. <<ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին>> թիվ 48 որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և տնտեսված միջոցները տարեվերջին վերադարձնել ՀՀ պետական բյուջե: Բացառել փաստացի ծախսերի համեմատ ավել դրամարկղային ծախսեր կատարելու դեպքերը, որոնք հանգեցնում են արհեստական դեբիտորական պարտքերի առաջացմանը: Բացառել տնտեսված գումարները տարեվերջին ոչ էական ծառայությունների ձեռք բերման նպատակով տարբեր կազմակերպություններին փոխանցելու փաստերը:

3. Հաշվապահական հաշվառմամբ ձևակերպել <<Ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Միսթենա Էյջի» ընկերության կողմից Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի և Արամ Խաչատրյանի անվան ֆիլիարմոնիկ

համերգասրահի տեխնիկական վերազինում»>> վարկային ծրագրի շրջանակներում իրականացված փաստացի ծախսերը և ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացվող <<Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին>> ձև 2 հաշվետվությունում արտացոլել իրական փաստացի ծախսերը:

Համապատասխան հանձնաժողովի եզրակացության հիման վրա կատարված աշխատանքները ավարտական ակտով հանձնել «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ին և հանձնարարել ՊՈԱԿ-ի ղեկավարությանը տեխնիկական վերազինման նպատակով կատարված փաստացի ծախսերը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառել և արտացոլել ՊՈԱԿ-ի հաշվապահական հաշվեկշռում:

4. <<Հայկական տպագրության 500-ամյակ>>, <<Երևանը՝ 2012թ. գրքի համաշխարհային մայրաքաղաք>>, <<Գրականության հրատարակում>> և <<Աջակցություն գրականության հրատարակմանը>>, <<Մշակութային միջոցառումներ>> ծրագրով մինչև 2013թ. ավարտը իրականացնել նախարարության հաշվապահական հաշվառմամբ ու ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված հաշվետվություններով արտացոլված դերիտորական պարտքերի գույքագրում: Այն պայմանագրերով, որոնց գծով կազմակերպությունները ներկայացրել են նախատեսված աշխատանքների, ծառայությունների մատուցման վերաբերյալ հիմնավոր փաստաթղթեր՝ կազմել հանձնման-ընդունման արձանագրություններ, կատարված ծախսերը ձևակերպել փաստացի ծախսերով և նվազեցնել դերիտորական պարտքերի գումարներից: Իսկ այն պայմանագրերով, որոնց գծով կազմակերպությունները նախատեսված աշխատանքները, ծառայությունները չեն մատուցել կամ մատուցել են մասամբ կամ նախարարությանը հաշվետվություններ չեն ներկայացրել՝ ձեռնարկել կոնկրետ միջոցառումներ այդ կազմակերպություններից հետ պահանջել հատկացված գումարները և մինչև 2013թ. ավարտը վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

Ուժեղացնել հսկողությունը կազմակերպությունների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ, ապահովել անպարտաճանաչ

կատարողներից պայմանագրերով նախատեսված տույժերի գանձումը և փոխանցումը ՀՀ պետական բյուջե:

5. Խիստ հսկողություն սահմանել ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հուշարձանների վերանորոգման նախահաշիվների կազմման նկատմամբ: Ստուգմամբ արձանագրված նախահաշիվներով ավել հաշվարկված գումարները նվազեցնել հուշարձանների վերանորոգման մնացորդային աշխատանքների նախահաշվից և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա գումարից:

Բացառել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 741 հոդվածի պահանջների խախտումներով նախահաշվով նախատեսված ծավալներից ավել առանց մասնագիտական եզրակացության աշխատանքների կատարումը:

Շինվերանորոգման աշխատանքների իրականացման նախահաշիվները կազմելիս ղեկավարվել ՀՀ քաղաքաշինության նախարարի 16 հունիսի 2008թ.-ի N41 հրամանով հաստատված կարգի պահանջներով, թույլ չտալ նախահաշիվներում անհիմն ծախսերի նախատեսման փաստեր:

6. Մշակութային և այլ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերում 100% կանխավճարի դրույթը նախատեսել միայն խիստ անհրաժեշտության դեպքերում բավարար հիմնավորումներով:

«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ

1. «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Քոլեջ) ՀՀ մշակույթի նախարարության (պատվիրատու) հետ կնքված պայմանագրերով ստանձնած ծառայությունները լրիվ ծավալով չի մատուցել՝ (սովորողների փաստացի թիվը պայմանագրով նախատեսվածից պակաս է եղել), որի արդյունքում Քոլեջին ՀՀ պետական բյուջեից ավել է ֆինանսավորվել ընդամենը 1190.1 հազ. դրամ:

2. Քոլեջի շենքի ջեռուցման նպատակով <<Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա>> ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագրերով <<Երևանի Կոմիտասի անվան

պետական կոնսերվատորիա>> ՊՈԱԿ-ի կողմից պայմանագրով նախատեսված գումարից Քոլեջին ավել պահանջ է ներկայացվել 1346.6 հազ. դրամի չափով, որը ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ամբողջությամբ վճարվել է:

3. ՀՀ պետական բյուջեից կրթաթոշակների վճարման համար հատկացված գումարներից ՀՀ կառավարության <<ՀՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին>> 01.03.2007թ. թիվ 297-Ն որոշմամբ հաստատված կարգի և ՀՀ վարչապետի 14.04.1999թ. <<ՀՀ պետական բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ քոլեջների), պրոֆեսիոնալ – տեխնիկում ուսումնարանների պետական պատվերով սովորող ուսանողների և սովորողների, մագիստրոսների, ասպիրանտների և դոկտորանտների կրթաթոշակների չափերը սահմանելու մասին>> թիվ 217 որոշման պահանջների անտեսմամբ 218.5 հազ. դրամը վճարվել է որպես պարգևատրում և ձևակերպվել կրթաթոշակի հողվածով փաստացի ծախս:

4. ՀՀ պետական բյուջեում Քոլեջի երթևեկ սովորողներին սննդի տրամադրման համար սննդամթերքի հողվածով նախատեսված և պայմանագրային գումարներում ներառված ու ֆինանսավորված գումարներից Քոլեջի սովորողներին 6285.6 հազ. դրամի պակաս սնունդ է տրամադրվել:

5. Խախտելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջները ձեռք է բերել 5510.5 հազ. դրամի ապրանքներ:

Առաջարկվել է.

- Խիստ հսկողություն սահմանել պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարման նկատմամբ, պայմանագրով նախատեսված պարտավորությունների լրիվ ծավալով կատարման անհնարինության դեպքում կողմերի համաձայնությամբ պայմանագրում սահմանված կարգով կատարել փոփոխություններ:

- ՀՀ պետական բյուջեի «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» և «Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» բյուջետային ծրագրերի իրականացման նպատակով կնքվող պայմանագրերում

նախատեսել նորմ պայմանագրով նախատեսված ծառայությունները կատարողի կողմից լրիվ ծավալով չկատարելու դեպքում պայմանագրային գումարից նվազեցվող գումարի հաշվարկի վերաբերյալ:

- Ապահովել ստուգմամբ արձանագրված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

- ՀՀ պետական բյուջեից սննդամթերքի հողվածով հատկացված գումարները առաջնահերթ օգտագործել սովորողներին սննդի տրամադրման նպատակով, իսկ Քոլեջից անկախ պատճառներով տնտեսումներ առաջանալու դեպքում պատվիրատուին ներկայացնել առաջարկություն այդ գումարները նախահաշվի այլ ծախսային հողվածներով ծախսելու վերաբերյալ:

- ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարները ծախսել ծախսերի նախահաշիվներին համապատասխան, թույլ չտալ նախահաշվի առանձին հողվածներով շեղումների փաստեր:

- Ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների ձեռք բերումներն իրականացնել բացառապես <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

«Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ

1. «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ՊՈԱԿ) «Օպերային և բալետային արվեստի ներկայացումներ» ծրագրով.

- Չի ապահովել ՀՀ մշակույթի նախարարության հետ կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունների լրիվ ծավալով կատարումը և պայմանագրերով նախատեսված ներկայացումների քանակի, հանդիսատեսների թվի ու դահլիճի ծանրաբեռնվածության ցուցանիշները մշտապես թերակատարվել են: Բացի այդ սուբսիդիայի տրամադրման պայմանագրերում տոմսերի վաճառքից կանխատեսվող եկամուտները հաշվարկելիս մեկ տոմսի միջին գինը ընդունվել է նախորդ տարիների փաստացի միջին գնից ցածր՝ էականորեն նվազեցնելով տոմսերի վաճառքից կանխատեսվող եկամուտների գումարը: Նշված փաստերի արդյունքում տոմսերի իրացումից

կանխատեսվող եկամուտները նվազել են, որն էլ իր հերթին հանգեցրել է ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ սուբսիդիաների տրամադրմանը:

- ՊՈԱԿ-ը ծախսերի նախահաշիվներով հիմնական գործունեությունից նախատեսված եկամուտների համեմատ ավել եկամուտներ է ստացել, սակայն անտեսելով ՀՀ կառավարության 24.12.2003թ. «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի և կողմերի միջև ստորագրված պայմանագրերի պահանջները նախատեսվածից ավել ստացված եկամուտի չափով չի նվազեցրել պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի գումարը:

- ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված սուբսիդիայի գումարներից 4536.9 հազ. դրամը չի ծախսվել, սակայն ՊՈԱԿ-ի ՀՀ մշակույթի նախարարությանը ներկայացրած հաշվետվություններում նշված տարբերությունները ցույց չեն տրվել:

- ՊՈԱԿ-ի կողմից կազմված և նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից հաստատված «Կազմակերպության եկամուտների և բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող ծախսերի» նախահաշիվներում յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի վերջին տասնօրյակում (այսինքն՝ փաստացի ծախսերի մակարդակը արդեն իսկ հայտնի լինելու պայմաններում) կատարվել են ճշտումներ: Սակայն ՊՈԱԿ-ը գրեթե բոլոր ծախսային հոդվածներով փաստացի ծախսերը իրականացրել է ճշտված նախահաշվով նախատեսված գումարներից շեղումներով:

2. «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով.

- Ժորժ Բիզեի «Կարմեն» օպերայի բեմադրության համար ՀՀ պետական բյուջեից 31.03.2012թ. ՊՈԱԿ-ին հատկացված գումարի դիմաց օպերայի բեմադրությունը պայմանագրով նախատեսված նախնական ժամկետում 10.02.2013թ.-ին չի իրականացվել, սահմանվել է պատվերի կատարման նոր ժամկետ՝ 30.12.2013թ.-ը, սակայն հատկացված 24208.2 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսեր չեն կատարվել:

- «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի» ստեղծման 75-ամյակի հոբելյանական միջոցառումների ծախսերի նախահաշվով նախատեսված և ֆինանսավորված գումարների հաշվին 1500.0 հազ. դրամի ծախսեր չեն

կատարվել և գումարը պատվիրատուին հետ չի վերադարձվել: Կատարվել է նաև 1815.8 հազ. դրամի անարդյունավետ ծախս:

- ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարների հաշվին առանձին ապրանքների ու ծառայությունների ձեռքբերումներն իրականացվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումով:

Առաջարկվել է.

1. Ապահովել ՀՀ մշակույթի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունների լրիվ ծավալով կատարումը, նույն թվում՝ ոչ ֆինանսական՝ ներկայացումների քանակի, հանդիսատեսների թվի ու դահլիճի ծանրաբեռնվածության ցուցանիշների կատարումը:

2. Նախարարությանը ներկայացվող <<Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին>> հաշվետվությունում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված սուբսիդիայի փաստացի ծախսերի վերաբերյալ ներկայացնել արժանահավատ տվյալներ:

3. ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարները ծախսել խստորեն ղեկավարվելով <<Կազմակերպության եկամուտների և բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող ծախսերի>> նախահաշիվներով՝ բացառելով ճշտված նախահաշիվներով նախատեսված գումարների համեմատ փաստացի ծախսերի շեղումների փաստերը:

4. ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարների հաշվին ապրանքների ու ծառայությունների ձեռքբերումներն իրականացնել ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

5. ՀՀ պետական բյուջեից մշակութային միջոցառումների համար հատկացված գումարները ծախսել արդյունավետ, թույլ չտալ միջոցառումների ծախսերի նախահաշիվներում ոչ նպատակային ծախսեր ներառելու փաստեր:

6. Այսուհետ բացառել պայմանագրերում 100 տոկոս կանխավճարների նախատեսումները և խիստ հսկողություն սահմանել չծախսված դրամական միջոցների մնացորդները պայմանագրերով սահմանված կարգով ՀՀ պետական բյուջե վերադարձնելու ուղղությամբ:

7. Ապահովել ստուգման արդյունքներով արձանագրված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Հայ-ռուսական լեռնահանքային կազմակերպություն» ՓԲԸ

Ընկերությունը 2010թ տարեկան գործունեության արդյունքում ունեցել է 46122.0 հազ. դրամի զուտ վնաս, 2011թ արդյունքներով՝ 87416.0 հազ. դրամի զուտ վնաս, իսկ 2012թ արդյունքներով՝ 122176.0 հազ. դրամի զուտ վնաս: 2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության կուտակված վնասը կազմել է 255714.0 հազ. դրամ:

Ընկերության 2010-2012թթ գործունեության արդյունքներով ձևավորված վնասների առաջացման պատճառների ստուգմամբ պարզվեց, որ վնասները հիմնականում պայմանավորված են արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթ չունենալու պայմաններում ընկերության վարչական ապարատի պահպանման գծով ծախսեր իրականացնելու, փոխառության գծով ծախսերը ամբողջությամբ ֆինանսական ծախս ձեւակերպելու և առանձին դեպքերում ընկերությանը մատուցված ծառայությունների դիմաց վճարված գումարների մեջ ներառված ԱԱՀ-ի գումարները ծախսագրելու հանգամանքով:

Այսպես.

1. Ընկերության կանոնադրական կապիտալի 50%-ի բաժնետեր՝ Ռուսաստանի Դաշնության «Ատոմռեզուրգուտո» ԲԲԸ-ից ներդրումային ծրագրերի (երկրաբանական հետախուզական և գնահատման աշխատանքների կատարում) իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացած փոխառության գծով փոխառուին վճարված տոկոսները և տույժերը (ծախսերը) «Օգտակար հանաձոների հետախուզում և գնահատում» թիվ 6 Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի և «Փոխառության ծախսումներ» թիվ 23 Հաշվապահական հաշվառման

միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան որակավորվող ակտիվի արժեքին ավելացնելու փոխարեն ձեռակերպել է որպես ֆինանսական ծախս:

Նշված խախտման հետեւանքով ընկերության 2010թ. գործունեության արդյունքներով զուտ վնասը ավել է ցույց տրվել 8380.7 հազ. դրամի չափով, 2011թ արդյունքներով՝ 9899.5 հազ. դրամի չափով, իսկ 2012թ արդյունքներով՝ 4188.2 հազ. դրամի չափով:

2. Ընկերությունը հանդիսանալով ավելացված արժեքի հարկ վճարող 2011-2012թթ. ընթացքում մի շարք կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքի մեջ ներառված ԱԱՀ գումարները հաշվանցելու փոխարեն ձեռակերպել է վարչական ծախսերով:

Արդյունքում ընկերությունը 2011թ վարչական ծախսերում անհիմն ներառել է 1530.8 հազ. դրամի, իսկ 2012թ՝ 1947.6 հազ. դրամի ԱԱՀ-ի գումարներ, որոնք հանգեցրել են նույն գումարների չափով վնասների ավել ցույց տալուն:

Փաստորեն վերը նշված անճշտությունների արդյունքում ընկերության 2010թ տարեկան գործունեության արդյունքում ստացած զուտ վնասը ավել է ցույց տրվել 8380.7 հազ. դրամի չափով, 2011թ տարեկան գործունեության արդյունքում ստացած վնասը՝ 11430.3 հազ. դրամի չափով (9899.5+1530.8), իսկ 2012թ տարեկան գործունեության արդյունքում ստացած զուտ վնասը՝ 6135.8 հազ. դրամի չափով (4188.2+1947.6):

Ընկերության 2010-2012թթ տարեկան գործունեության արդյունքներով ստացած զուտ վնասները ենթակա են պակասեցման 25946.8 հազ. դրամի չափով: Նույն գումարի չափով ենթակա է պակասեցման նաեւ ընկերության 2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվության հաշվապահական հաշվեկշռում ցույց տրված 255714.0 հազ. դրամի կուտակված վնասը:

Ստուգմամբ պարզվեց նաեւ, որ ընկերությունը 2010թ. կատարել է 4120.3 հազ. դրամի գործուղման և ներկայացուցչական ծախսեր, որից 1373.9 հազ. դրամի ներկայացուցչական ծախսերը կատարվել են առանց համապատասխան հիմքերի (փաստաթղթերի) առկայության՝ խախտելով <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 14-դ հոդվածի պահանջները :Նշված ծախսերի գծով առկա են միայն հաշվիչ դրամարկղային մեքենաների կտրոններ: Առանց համապատասխան հիմքերի առկայության ընկերության

կողմից 2011թ կատարվել է 1011.8 հազ. դրամի, իսկ 2012թ 670.2 հազ. դրամի ներկայացուցչական ծախսեր:

Արդյունքում 2010-2012թթ ընթացքում առանց համապատասխան սկզբնական հաշվառման փաստաթղթերի առկայության կատարվել են 3055.9 հազ. դրամի ներկայացուցչական ծախսեր:

Առաջարկվել է .

- ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունում քննության առնել ստուգման նյութերը, միջոցներ ձեռնարկել ստուգմամբ արձանագրված խախտումների ու թերությունների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

- Ուժեղացնել հսկողությունը ընկերության գործունեության արդյունքների վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունները հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների եւ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմելու նկատմամբ:

Հանձնարարել ընկերությանը.

1. Երկրաբանական հետախուզական եւ գնահատման աշխատանքների կատարման նպատակով ստացված փոխառության ծախսերի հաշվառումը իրականացնել հիմք ընդունելով <<Օգտակար հանածոների հետախուզում եւ գնահատում>> թիվ 6 Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի եւ <<Փոխառության ծախսումներ>> թիվ 23 Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի պահանջները:

2. Ներկայացուցչական ծախսեր իրականացնելիս ղեկավարվել <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 14-դ հոդվածի պահանջներով եւ հաշվապահական հաշվառման գրանցումները կատարել ծախսերը հիմնավորող սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա:

3. Ընկերությանը մատուցած ծառայությունների արժեքում ներառված ԱԱՀ գումարների ձևակերպման ժամանակ ղեկավարվել <<Ավելացված արժեքի հարկի մասին>>

ՀՀ օրենքի պահանջներով եւ բացառել հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները վարչական ծախսերի կազմում ներառելու փաստերը:

4. Ընկերության 2010-2012թթ տարեկան գործունեության արդյունքներով ֆինանսական հաշվետվություններում ցույց տրված զուտ վնասները եւ 2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության ֆինանսական հաշվետվության հաշվապահական հաշվեկշռում ցույց տրված 255714.0 հազ. դրամի կուտակված վնասը պակասեցնել 25946.8 հազ. դրամի չափով՝ տալով համապատասխան հաշվապահական ձեւակերպումներ եւ լիազոր մարմինն ներկայացնել ճշգրտված ֆինանսական հաշվետվություն:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

1. <<Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կենտրոնական ապարատի պահպանում>> ծրագրով ծախսերի իրականացման ընթացքում անտեսվել են ՀՀ կառավարության 18.01.2002թ-ի թիվ 48 որոշմամբ հաստատված կարգի պահանջները, մասնավորապես՝ տարեվերջին դրամարկղի մնացորդը ՀՀ պետական բյուջե չի վերադարձվել, թույլ են տրվել առանձին ծախսային հոդվածներով գերածախսեր, որոնք հանգեցրել են կրեդիտորական պարտքերի առաջացմանը և հաջորդ տարիներին ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա լրացուցիչ պարտավորությունների ձևավորմանը:

2. Կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերում չեն նախատեսվել համապատասխան նորմեր սովորողների թվաքանակի փոփոխության հետ կապված պայմանագրային գումարի վերահաշվարկման համար: Նշվածը հանգեցրել է նրան, որ սովորողների թվի նվազման պայմաններում համապատասխան չափով բյուջեից հատկացվող գումարները չեն նվազել:

3. <<Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ>>, <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ>>, <<Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ>> ծրագրերն իրականացնող առանձին կազմակերպություններ անտեսելով <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական

կրթության մասին» ՀՀ օրենքի և նախարարության հետ կնքված պայմանագրերի պահանջները՝ ՀՀ պետական բյուջեից կրթաթոշակների վճարման համար հատկացված գումարների մի մասը նշված ծրագրերով նախատեսված նպատակով չեն ծախսել և ՀՀ պետական բյուջե չեն վերադարձրել:

4. «Ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռք բերում» ծրագրով իրականացվել են 10522.5 հազ. դրամի ապրանքների ձեռք բերումներ, որոնց անհրաժեշտությունը ամբողջությամբ կամ հիմնական մասով չի եղել և ամբողջությամբ կամ հիմնականում ըստ անալիտիկ հաշվառման տվյալների մնում են որպես մնացորդներ: Խախտվել է ՀՀ կառավարության 02.05.1996թ «ՀՀ-ում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 147 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին» կանոնադրության պահանջները և ծրագրի շրջանակներում ձեռք բերված 6370.0 հազ. դրամի ուսուցողական ֆիլմերն առանց ծախսը հիմնավորող փաստաթղթերի՝ պահանջագրերի և բաշխման ցուցակների դուրս են գրվել ծախսերով:

5. «Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում» ծրագրով 2011-2013թթ. ՀՀ պետական բյուջեում նախատեսված գումարները ծրագրով նախատեսված նպատակներով չեն ծախսվել՝ նախատեսված 2,137,012,0 հազ. դրամից ծրագրով նախատեսված նպատակներով ծախսվել է ընդամենը 6722.4 հազ. դրամը, իսկ մնացած գումարները հիմնականում նվազեցվել է և ուղղվել է ՀՀ պետական բյուջեի այլ ծրագրերի ֆինանսավորմանը:

6. «Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգում» և «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրերով հիմնանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեից նախարարությանը հատկացված գումարների ծախսումների ընթացքում թույլ են տրվել հավելագրումների ու անորակ աշխատանքների կատարման փաստեր, ինչպես նաև մի շարք օրենսդրական ակտերի պահանջների անտեսումներ:

Առաջարկվել է.

- Ղեկավարվել ՀՀ կառավարության 18.01.2002թ. «ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» թիվ 48 որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և դրամարկղում առկա մնացորդը բյուջետային տարվա վերջին աշխատանքային օրվա ավարտին փոխանցել ՀՀ պետական բյուջեի համապատասխան գանձապետական հաշվին, թույլ չտալ ՀՀ պետական բյուջեում նախատեսված գումարներից ավել փաստացի ծախսեր կատարելու դեպքեր, որոնք հանգեցնում են կրեդիտորական պարտքերի գոյացմանն ու հաջորդ տարիներին ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա լրացուցիչ պարտավորությունների առաջացմանը:

- ՀՀ պետական բյուջեում ծրագրային վերաբաշխումները կատարել միայն խիստ անհրաժեշտության դեպքերում:

- Որպես կրթության բնագավառի լիազոր պետական մարմին՝ քննարկել ուսումնական հաստատություններում սովորողների թվաքանակի փոփոխության հետ կապված ծախսերի վերահաշվարկի համապատասխան կարգ մշակելու և սահմանված կարգով շրջանառության մեջ դնելու անհրաժեշտության հարցը:

- «Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ»-, «Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ»-, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն» բյուջետային ծրագրերով ուսումնական հաստատությունների հետ կնքվող պայմանագրերում նախատեսել համապատասխան պայման՝ կրթաթոշակի վճարման համար պայմանագրով նախատեսված գումարների չծախսված մնացորդները տարեվերջին ՀՀ պետական բյուջե վերադարձնելու վերաբերյալ:

- ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» ձև 2 հաշվետվությունում ճիշտ արտացոլել դրամարկղային, փաստացի ծախսերը և դեբիտորական պարտքերը:

- «Ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և

ուսումնադիտողական պարագաների ձեռք բերում>> ծրագրով թույլ չտալ նախատեսված գումարների հաշվին անարդյունավետ ծախսեր կատարելու դեպքեր: Ծրագրի շրջանակներում գնումների պլանի կազմման և իրականացման ընթացքում հաշվի առնել պահեստավորված միջոցների մնացորդները:

- Ապրանքանյութական արժեքների ծախսագրումներն իրականացնել՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 02.05.1996թ-ի <<ՀՀ-ում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին>> թիվ 147 որոշմամբ հաստատված <<ՀՀ-ում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին>> կանոնադրության պահանջներով, իսկ առանց ծախսերը հիմնավորող փաստաթղթերի՝ պահանջագրերի և բաշխման ցուցակների դուրս գրած ապրանքանյութական արժեքները մուտքագրել որպես պահեստավորված միջոցներ:

- ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգման աշխատանքներն իրականացնելիս վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող և արդիականացվող օբյեկտների նախագծման հետ միասին նախագծողին տրամադրել օբյեկտի տեխնիկական վիճակի մասին ՀՀ կառավարության 1996թ-ի հոկտեմբերի 30-ի թիվ 346 որոշմամբ սահմանված կարգով կազմված եզրակացությունը և անհրաժեշտության դեպքում պահանջել կատարել սեյսմազինվածության մակարդակի ավելացման տեխնիկական միջոցառումներ: Հատուկ ուշադրություն դարձնել նորմատիվատեխնիկական փաստաթղթերի առկայության և դրանց վարման օրինականությանը, առանձնապես շինարարության վարման մատյանների և ծածկված աշխատանքների ակտերի կազմմանը: Հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերում և ծավալաթերթ նախահաշիվներում բացառել այսպես կոչված համադրման մեթոդը և փոփոխությունները կատարել ՀՀ կառավարության 17.12.2009թ-ի թիվ 1521-Ն որոշման թիվ 1 հավելվածի 3-րդ գլխի 21-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջի համաձայն՝ թույլատրվող չափաքանակներով, համապատասխան մասնագիտական եզրակացության առկայության պայմաններում և ՀՀ կառավարության 09.04.2009թ-ի թիվ 368-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված ընթացակարգերի համաձայն:

- Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ արձանագրված գումարները ՀՀ պետական բյուջե վերականգնելու և անորակ կատարած աշխատանքները վերացնելու ուղղությամբ:

«Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց» ՊՈԱԿ

1. «Տարրական ընդհանուր կրթություն», «Հիմնական ընդհանուր կրթություն» և «Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն» ծրագրերով ՀՀ կրթության և գիտության նախարարության և Դպրոցի միջև կնքված պայմանագրերով Դպրոցը ստանձնած պարտավորությունները լրիվ ծավալով չի մատուցել՝ սովորողների փաստացի թիվը պայմանագրերով նախատեսվածից պակաս է եղել: Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» ՀՕ-160-Ն օրենքի և կողմերի միջև ստորագրված պայմանագրերի պայմանները 2010-2012թթ. ՀՀ պետական բյուջեից ավել ֆինանսավորված գումարը կազմում է 6946.2 հազ. դրամ, որը առաջարկվել է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության և Դպրոցի միջև 2010թ. համար կնքված պայմանագրով մատուցվելիք ծառայության գինը սահմանվել է 41640.7 հազ. դրամ, սակայն ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել է 42640.7 հազ. դրամ կամ ավել է ֆինանսավորվել 1000.0 հազ. դրամ:

3. Դպրոցի դրամական միջոցների մնացորդը առ 01.10.2013թ. կազմում է 13220.8 հազ. դրամ, որն ամբողջությամբ ՀՀ պետական բյուջեից ստացված դրամական միջոցների մնացորդն է և գոյացել է սովորողների փաստացի թիվը համաձայնագրով նախատեսվածից պակաս լինելու, 2010թ. համաձայնագրով նախատեսվածի համեմատ ՀՀ պետական բյուջեից 1000.0 հազ. դրամի չափով ավել ֆինանսավորման և երեխա/օրերի թվի թերակատարման հետևանքով սննդամթերքի ձեռք բերման հողվածով ծախսերի տնտեսման արդյունքում:

4. Դպրոցը առանձին ծախսերը իրականացրել է ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից հաստատված ծախսերի նախահաշիվներից շեղումներով:

Առաջարկվել է.

- Ապահովել ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ կնքված կրթական ծրագրերի գծով պայմանագրերով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը: Պայմանագրերով նախատեսված պարտավորությունների (մասնավորապես սովորողների թվի մասով) թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել պայմանագրային գումարները:

- ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարները ծախսել բյուջետային միջոցների հաշվին իրականացվող ծախսերի նախահաշիվներին համապատասխան, թույլ չտալ նախահաշվի առանձին հոդվածներով շեղումների փաստեր: Առանձին ծախսային հոդվածներով լրացուցիչ պահանջ առաջանալու դեպքում (մինչև գումարների ծախսումը) պահանջել դրանք հիմնավորել անհրաժեշտ հաշվարկներով և ներկայացնել պատվիրատուի հաստատմանը:

- Պայմանագրային գումարներից ավել գումարների ֆինանսավորումներ ստանալու դեպքում ավել մասը այսուհետ հանձնարարել հետ վերադարձնել:

- Դրամական միջոցների մնացորդը 2013թ. վերջում և այսուհետ յուրաքանչյուր տարվա վերջում հետ վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

«Արմավիրի Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան» ՊՈԱԿ

1. <<Միջնակարգ ընդհանուր կրթություն>> և <<Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն>> ծրագրերով ՀՀ կրթության և գիտության նախարարության և Վարժարանի միջև կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունները Վարժարանը լրիվ ծավալով չի մատուցել՝ սովորողների փաստացի միջին տարեկան թիվը պայմանագրերով նախատեսվածից պակաս է եղել: Հիմք ընդունելով <<Հանրակրթության մասին>> ՀՕ-160-Ն օրենքի և կողմերի միջև ստորագրված պայմանագրերի պայմանները ՀՀ պետական բյուջեից ավել ֆինանսավորված գումարը կազմում է 2078.8 հազ. դրամ, իսկ 2013թ. ֆինանսավորումից նվազեցվող գումարը՝ 3063.4 հազ. դրամ:

2. Վարժարանը առանձին ծախսերը իրականացրել է ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից հաստատված ծախսերի

նախահաշիվներից շեղումներով: Վարժարար խախտել է ՀՀ կառավարության 02.05.1996թ. «Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման մասին կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 147 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում հաշվառման և հաշվետվության մասին» կանոնադրության պահանջները և նախարարությանն է ներկայացրել անարժանահավատ հաշվետվություն՝ հաշվապահական հաշվետվության մեջ ներկայացվել են սինթետիկ և վերլուծական հաշվառման տվյալներից տարբերվող տեղեկատվություն:

Առաջարկվել է.

- Ապահովել ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ կնքված կրթական ծրագրերի գծով պայմանագրերով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը: Պայմանագրերով նախատեսված պարտավորությունների (մասնավորապես սովորողների թվի մասով) թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել պայմանագրային գումարները:

- ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարները ծախսել բյուջետային միջոցների հաշվին իրականացվող ծախսերի նախահաշիվներին համապատասխան, թույլ չտալ նախահաշվի առանձին հոդվածներով շեղումների փաստեր: Առանձին ծախսային հոդվածներով լրացուցիչ պահանջ առաջանալու դեպքում (մինչև գումարների ծախսումը) պահանջել դրանք հիմնավորել անհրաժեշտ հաշվարկներով և ներկայացնել պատվիրատուի հաստատմանը:

- Բացառել հաշվապահական հաշվետվություններում ոչ արժանահավատ տեղեկատվության ներկայացման դեպքերը:

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ

1. ՀՀ պետական բյուջեի «Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ» բյուջետային ծրագրով գումարների նախատեսման նպատակով ԿՏԱԿ-ի կողմից ներկայացված բյուջետային հայտերում ծառայությունների մատուցման համար պահանջված միավոր գները՝ հետևաբար նաև ընդհանուր գումարները չեն հիմնավորվել հաշվարկներով:

Վերջիններս գերազանցել են ծրագրի իրականացման նպատակով ԿՏԱԿ-ի և կատարողների միջև կնքված պայմանագրերում նախատեսված միավոր գներին ու ընդհանուր գումարներին:

2. ԿՏԱԿ-ի կանոնադրությամբ ԿՏԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնին՝ խորհրդին վերապահված է լիազորված պետական մարմնին ներկայացնել առաջարկություններ կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ, սակայն խորհուրդը նախահաշիվների հաստատման նպատակով լիազորված պետական մարմնին ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չի ներկայացրել և հաստատել է տարեկգրի ծախսերի նախահաշիվները, տարվա ընթացքում նախահաշիվներում կատարված փոփոխությունները:

Առաջարկվել է.

- ՀՀ պետական բյուջեի «Համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ» ծրագրով գումարների նախատեսման նպատակով ԿՏԱԿ-ից պահանջել ներկայացնել ծառայությունների մատուցման միավոր գների հիմնավոր հաշվարկներ, դրանք համադրելով նախորդ տարիների փաստացի միավոր գների հետ:

- Հանձնարարել ԿՏԱԿ-ի ղեկավարությանը՝ այսուհետ ղեկավարվելով կազմակերպության կանոնադրության պահանջներով կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվների հաստատման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը ներկայացնել նախահաշիվների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ: Միաժամանակ քննարկել ԿՏԱԿ-ի ծախսերի նախահաշիվները լիազոր պետական մարմնի կողմից հաստատելու նպատակով կանոնադրությունում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակահարմարության հարցը:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային տեսչություններ

Վանաձորի տարածքային հարկային տեսչությունում իրականացված ստուգման նպատակով ընտրված թվով 27 հարկ վճարողներից թվով 16-ի գծով արձանագրվել են տարբեր բնույթի թերություններ, անհամապատասխանություններ և խախտման փաստեր,

որոնք կարող են հանգեցնել ՀՀ պետական բյուջեի հանդեպ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացման:

Նոր-Նորքի հարկային տեսչությունում իրականացված ստուգման նպատակով ընտրված թվով 41 հարկ վճարողներից թվով 12-ի գծով արձանագրվել են տարբեր բնույթի թերություններ, անհամապատասխանություններ և խախտման փաստեր, որոնք կարող են հանգեցնել ՀՀ պետական բյուջեի հանդեպ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացման:

Խախտումներ արձանագրված հարկ վճարողների գծով ՀՀ պետական բյուջե գանձման ենթակա գումարների վերջնական մեծությունը կարող է ճշտվել վերջիններիս մոտ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ստուգումներ (վերստուգումներ) կատարելու և (կամ) վարչարարական այլ մեխանիզմներ կիրառելու կամ հարկ վճարողների կողմից ճշտված հաշվարկներ ներկայացնելու միջոցով:

Առաջարկվել է .

- ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեում քննարկման առարկա դարձնել Վանաձորի տարածքային և Նոր-Նորքի հարկային տեսչություններում կատարված ստուգումների արդյունքներով կազմված ակտերը, միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումների վերացման, հետազայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

-Հարկ վճարողների մոտ ստուգում իրականացնող հարկային ծառայողների ուշադրությունը հրավիրել «Հարկերի մասին» և առանձին հարկատեսակների մասին ՀՀ օրենքներով սահմանված դրույթների ճշգրիտ կիրառման և հարկային պարտավորությունների ճիշտ հաշվարկման ու գանձման հարցերին:

-Ակտերով արձանագրված խախտման փաստերը ՀՀ ԿԱ ՊԵԿ տարածքային ստորաբաժանումներում բացառելու և հետազայում այդպիսիք թույլ չտալու նպատակով ստուգումների արդյունքներով արձանագրված փաստերի և խախտումների վերաբերյալ համապատասխան շրջաբերականով տեղեկացնել բոլոր ստորաբաժանումներին:

-ՀՀ պետական բյուջեին հասանելիք լրացուցիչ հարկային պարտավորությունների վերջնական մեծությունը ճշտելու նպատակով Վանաձորի տարածքային հարկային տեսչությունում հաշվառված թվով 10 հարկ վճարողների մոտ իրականացնել ստուգումներ, թվով 3 հարկ վճարողների մոտ՝ վերստուգումներ, թվով 4 հարկ վճարողների մոտ վերստուգումներ և (կամ) վարչարարական այլ մեխանիզմների կիրառում, մեկ հարկ վճարողի գծով՝ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա լրացուցիչ հարկային պարտավորությունների գանձումը ապահովելու նպատակով առաջնորդվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, իսկ Նոր Նորքի հարկային տեսչությունում հաշվառված թվով 12 հարկ վճարողների մոտ իրականացնել ստուգումներ:

-Իրականացվելիք վերստուգումների ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել հարկ վճարողների կողմից ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված աշխատանքների ծավալները ներկայացված հաշվետվություններում եւ հաշվարկներում ամբողջությամբ արտացոլելու, շահութահարկի հաշվարկներում ցույց տրված համախառն եկամտի նվազեցումների եւ հաշվարկային նվազեցումների գծով առաջացած տարբերության գումարների, ԱԱՀ-ի հաշվարկման հիմք հանդիսացող տվյալների արժանահավատության հարցերին (ստուգման ակտերում արձանագրված անհամամասնություններին), որոնք կարող են ազդել հարկ վճարողների կողմից ՀՀ պետական բյուջեի հանդեպ ունեցած պարտավորությունների մեծության վրա:

-Քննարկել ստուգմամբ արձանագրված փաստերի համար հարկային ծառայություն իրականացնող պատասխանատու անձանց պատասխանատվության ենթարկելու հարցը:

ՀՀ ՄԱՐԶԵՐ

2013 թվականի ընթացքում ստուգումներ են իրականացվել ՀՀ Լոռու և Գեղարքունիքի մարզերում: ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2013 թվականի ծրագրով ստուգումների անցկացումը նախատեսված էր մարզպետարաններում, տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքային համայնքներում, բժշկական կենտրոններում:

ՀՀ Լոռու մարզ

ՀՀ Լոռու մարզպետարան

- Մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին ավել է ֆինանսավորվել 6442.6 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

- Թվով 4 սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների կողմից նպաստառուներին ավել է վճարվել 3836.0 հազ. դրամի նպաստ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե: ՄԾՏԳ-ներում հայտնաբերվել են նաև խախտումներ թվով 173 նպաստառուների գծով, որոնց անապահովության միավորի վերահաշվարկի արդյունքում նպաստառուների անապահովության միավորը նվազել է, սակայն անապահովության սահմանային միավորի վրա ազդեցություն չի ունեցել՝ պահպանելով նպաստ ստանալու իրավունքը:

- Արձանագրվել է գործող նորմերից ավել վճարված գործուղման ծախսերի գումար, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

- Առանց ծախսը հիմնավորող փաստաթղթերի մարզպետի տարբեր կարգադրությունների համաձայն «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով կատարվել են ծախսեր: Խախտվել են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 25.08.1998թ. թիվ 525 որոշման պահանջները:

- Հաշվի առնելով ըստ հոդվածների (էլեկտրաէներգիայի գծով, կապի ծառայությունների գծով, կոմունալ ծառայությունների գծով և տրանսպորտային նյութերի գծով) առկա դեբիտորական պարտքերի և փաստացի կատարված ծախսերի դինամիկան պարզվել է, որ նշված ծախսային հոդվածներով 2013թ. բյուջեից ֆինանսավորման ենթակա գումարներից ենթակա է պակասեցման առնվազն 4945.8 հազ. դրամ (առ 01.01.2013թ. դրությամբ ձևավորված դեբիտորական պարտքերի ընդհանուր գումարը): Բացի դրանից 2013թ. ծախսերի նախահաշիվը ենթակա է ճշտման ընթացիկ տարվա վերջում հաշվի առնելով վերը նշված հոդվածներով կատարված փաստացի ծախսերը՝ բացառելով չհիմնավորված (արհեստականորեն ձևավորված) դեբիտորական պարտքերի կուտակումը:

- ՀՀ կառավարության 04.10.2012թ. թիվ 1392-Ն որոշման համաձայն Է. Կզմարթյանի անվան երաժշտական դպրոցի համար գույքի ձեռքբերման նպատակով Վանաձորի քաղաքապետարանին տրամադրված 27000.0 հազ. դրամի սուբվենցիայի շրջանակներում ձեռք բերված թվով 3 անվանում գույք չի նախատեսվել տեխնիկական բնութագրով: Վերը նշված գույքի ձեռք բերման ընդհանուր գումարը կազմել է 272.0 հազ դրամ: Գործարքի ընթացքում չեն պահպանվել պայմանագրի պահանջները (գնվել է տեխնիկական բնութագրով չնախատեսված գույք):

- Մարզպետարանի կապիտալ ծախսերի համար հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգմամբ արձանագրվել է 26856.3 հազ. դրամի խախտումներ (հսկիչ չափագրումների արդյունքով, նախահաշվային թանկացումներ, նախագծերով և պայմանագրերով ի սկզբանե ավել հաշվարկ, անորակ կատարված աշխատանքներ):

- Գնումների վերաբերյալ կնքված պայմանագրերի մասին հայտարարություններ տեղեկագրերում չեն հրապարակվել՝ խախտելով 06.12.2004թ. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 11 հոդվածի, 22.12.2010թ. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10 հոդվածի 1 կետի և ՀՀ կառավարության 17.12.2009թ. N 1521-Ն որոշմամբ հաստատված գնման առարկայի բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և գնումների ֆինանսավորման կարգի պահանջները:

- Խախտելով 22.12.2010թ. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 32 հոդվածի 1 կետի և ՀՀ կառավարության 17.12.2009թ. N 1521-Ն որոշմամբ հաստատված գնման առարկայի բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և գնումների ֆինանսավորման կարգի պահանջները մարզպետարանի կողմից իրականացված 1118.9 հազ. դրամի գնումների գործընթացի ժամանակ մրցույթի մասնակիցների կողմից չեն ներկայացվել պայմանագրերի ապահովումներ:

Առաջարկվել է.

1. ՀՀ Լոռու մարզպետարանում քննարկել ստուգման ակտով արձանագրված խախտումները և բացթողումները, ինչպես նաև ՀՀ օրենքների և ենթաօրենսդրական

ակտերի պահանջները չկատարելու հարցում պաշտոնատար անձանց իրենց պարտականությունների մեջ թերանալու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Ապահովել.

ա) Մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին 6442.6 հազ. դրամ ավել ֆինանսավորված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

բ) ՄԾՏԳ-ների կողմից նպաստառուներին ավել վճարված 3836.0 հազ. դրամ գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

գ) “Պետական նպաստների մասին” ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 20.03.2008թ.-ի թիվ 255-Ն, 15.01.2009թ.-ի թիվ 39-Ն, 14.01.2010թ. թիվ 32-Ն, 20.01.2011թ.-ի թիվ 17-Ն և 29.12.2011թ.-ի թիվ 1861-Ն որոշումների պահանջների կատարումը և ՄԾՏԳ-ներում հայտնաբերված խախտումների գծով սահմանային միավորի վրա ազդեցություն չունեցող թվով 173 նպաստառուների անապահովության միավորի վերահաշվարկումը:

դ) Մարզպետարանի կապիտալ ծախսերի գծով ավել վճարված 26856.3 հազ. դրամի վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

ե) Մարզպետարանի աշխատակիցներին ավել վճարված 190.0 հազ. դրամ գործուղման ծախսերի վերականգնումը ՀՀ պետական բյուջե :

զ) Այլ նպաստներ բյուջեից (մարզպետի ֆոնդ) հոդվածով առանց հիմնավոր փաստաթղթերի ծախսված 4951.4 հազ. դրամի վերականգնումը ՀՀ պետական բյուջե :

2. Էներգետիկ, կապի, կոմունալ ծառայությունների և տրանսպորտային նյութերի գծով 2013թ. ՀՀ պետական բյուջեից նախատեսված գումարներից առնվազն 4945.8 հազ. դրամը 2013թ. ծախսերի նախահաշվից պակասեցնել, ինչպես նաև ընթացիկ տարվա վերջում ծախսերի նախահաշիվը ճշտել, հաշվի առնելով վերը նշված հոդվածներով կատարված փաստացի ծախսերը՝ բացառելով չհիմնավորված (արհեստականորեն ձևավորված) դերիտորական պարտքերի կուտակումը:

3. Գնումների գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

4. Այսուհետ պահպանել <<Հրապարակային սակարկությունների մասին>> ՀՀ օրենքի, <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 25.08.1998թ. թիվ 525 և 18.01.2002թ. թիվ 48 որոշումների պահանջները:

5. Այսուհետ ՀՀ կառավարության որոշումներով ամրագրված քաղաքացիների փոխարեն այլ քաղաքացիների հետ պայմանագրեր կնքելու կամ նրանց գումարներ փոխհատուցելու դեպքերում ապահովել գործարքների գծով վերջիններիս լիազորությունները հավաստող համապատասխան հիմնավոր փաստաթղթերը:

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի, Ալավերդու և Ստեփանավանի քաղաքային համայնքներ

Արձանագրվել է.

- Համայնքների կողմից դոտացիայի ստացման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հողի հարկի և գույքահարկի ելակետային տվյալների անճշտություններ, ինչի արդյունքում հնարավոր են ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաների ոչ ճիշտ հաշվարկման դեպքեր:

- Համայնքների հողի հարկի և գույքահարկի բազաներից դուրս են մնացել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որի հետևանքով պակաս գումարներ են գանձվել, ինչի արդյունքում համայնքի բյուջեի նկատմամբ գոյացել են ապառքներ:

- Համայնքներում պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով հատկացված միջոցների օգտագործման խախտման դեպքեր, ինչի արդյունքում առաջացել են ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ:

- Վանաձորի ՄԾՏԲ-ի կողմից խախտումներով նշանակված և վճարված նպաստներ, ինչի արդյունքում առաջացել են ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ:

- Վանաձորի քաղաքային համայնքի կապիտալ նորոգման աշխատանքների, Ալավերդու քաղաքային համայնքին բնապահպանական ծրագրերի համար տրամադրված սուբվենցիաների գումարների ծախսման գծով ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ:

- Բացահատվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով իրականացված գնումներ:
- «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման դեպքեր:

Առաջարկվել է.

1. Ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկների համար ՀՀ Ֆինանսների նախարարությանը տրամադրված գույքահարկի և հողի հարկի գծով պակաս ներկայացված ելակետային տվյալները ճշտել և ճշտված տարբերակները ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարությանը:

2. Ձեռնարկել միջոցներ համայնքների բյուջեների հարկային և ոչ հարկային եկամուտների աղբյուրների ճիշտ հաշվառման և ամբողջությամբ հավաքագրման ուղղությամբ:

3. Ձեռնարկել միջոցներ արձանագրված գումարները ՀՀ պետական և համայնքային բյուջեներ վերականգնման ուղղությամբ:

4. Ձեռնարկել միջոցներ համայնքների գնումները «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան կազմակերպելու ուղղությամբ:

5. Բացառել “Ներքին աուդիտի մասին” ՀՀ օրենքի խախտման դեպքերը:

«Վանաձորի բժշկական կենտրոն» («Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր»)

ՓԲԸ

“Ալավերդու բժշկական կենտրոն” ՓԲԸ

“Ստեփանավանի բժշկական կենտրոն” ՓԲԸ

1. Հիվանդանոցային բուժօգնության ծառայությունների գծով հիվանդների բուժման ընթացքում խախտվել են «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ առողջապահության նախարարության և ընկերությունների միջև կնքված պայմանագրերին կից հատուկ պայմանների պահանջները և հիվանդների բուժման համար անհրաժեշտ դեղամիջոցներն ու բժշկական պարագաները

ընկերությունների կողմից ապահովվել են մասնակի կամ ոչ ամբողջությամբ: Նշված պահանջների խախտման համար կնքված պայմանագրերին կից հատուկ պայմաններով սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման արդյունքում առաջանում են ՀՀ պետական բյուջեից ավել հատկացված գումարներ:

2. Առանձին դեպքերում ՀՀ առողջապահության նախարարի 2009թ. դեկտեմբերի 14-ի 1991-Ա և 2011թ. մայիսի 23-ի 987-Ա հրամաններով հաստատված չափորոշիչների պահանջների խախտման արդյունքում ՀՀ ԱՆ ՊԱԳ ներկայացվող հաշվետվություններում ներկայացվել են ավել կատարողականներ:

3. Ընկերությունների կողմից խախտվել է ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշման պահանջները և պետական պատվերի շրջանակներում անվճար բժշկական օգնություն է տրամադրվել նույն որոշման թիվ 1 հավելվածով հաստատված ցանկում չընդգրկված անձանց, որի արդյունքում ՀՀ ԱՆ ՊԱԳ ներկայացվող հաշվետվություններում ավել կատարողական է ներկայացվել :

4. Արտահիվանդանոցային բուժօգնության ծառայությունների գծով ընկերությունների կողմից խախտվել են ՀՀ առողջապահության նախարարության և ընկերությունների միջև կնքված պայմանագրերին կից հատուկ պայմանների պահանջները, որի արդյունքում ՀՀ պետական բյուջեից ավել գումարներ են հատկացվել :

5. Գնումների գործընթացի ճշտության և օրինականության ստուգմամբ պարզվել է, որ ընկերությունների կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները և ընկերությունների գնումների գործի համակարգման համար պատասխանատու չի սահմանվել, գնումների պլան չի հաստատվել: Ընկերությունները գնումներ կատարելիս հիմնականում չեն առաջնորդվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

6. Շահութաբաժինների հաշվարկման և ժամանակին ՀՀ պետական բյուջե վճարման, ինչպես նաև զուտ շահույթի բաշխման ճշտության ստուգմամբ պարզվել է, որ հիմնադրի (ընկերության ընդհանուր ժողովի) կամ լիազոր մարմնի կողմից «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի ժբ) ենթակետի

պահանջներին համապատասխան ընկերությունների տարեկան գործունեության արդյունքներով ստացած զուտ շահույթի բաշխում չի կատարվել՝ շահույթի բաշխման վերաբերյալ համապատասխան որոշումներ չեն կայացվել:

7. “Վանաձորի բժշկական կենտրոն” և “Ստեփանավանի բժշկական կենտրոն” ՓԲԸ-ներում շահութաբաժնի հաշվարկման ժամանակ ՀՀ կառավարության 2006թ հունիսի 22-ի թիվ 1238-Ն և 2011թ. մարտի 3-ի թիվ 202-Ն որոշումներով սահմանված ավելացումները չկատարելու արդյունքում պակաս շահութաբաժին հաշվարկելու և սահմանված ժամկետում ՀՀ պետական բյուջե չվճարելու համար տույժեր հաշվարկելու արդյունքում առաջացել են ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահութաբաժնի գումարներ:

Առաջարկվել է .

- Մարզպետարանում քննության առնել ստուգումների նյութերը, միջոցներ ձեռնարկել ստուգումներով արձանագրված խախտումների ու թերությունների վերացման, հետազայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

- Ուժեղացնել հսկողությունը ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչների պահանջների պահպանման ուղղությամբ:

-Պետական պատվերի շրջանակներում կատարված անվճար բժշկական օգնության եւ սպասարկման աշխատանքների գծով ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարները փոխանցել ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվին:

-Արձանագրված լրացուցիչ շահութաբաժնի գումարները փոխանցել ՀՀ պետական բյուջեի «Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներ» գանձապետական հաշվին:

-Ապահովել ՀՀ ԱՆ և ընկերության միջև պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրերին կից հատուկ պայմանների կատարումը:

- ՀՀ պետական բյուջեին հասանելի շահութաբաժինները հաշվարկելիս խստագույնս առաջնորդվել ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի թիվ 202-Ն եւ 2006թ. հունիսի 22-ի թիվ 1238-Ն որոշումների պահանջներով:

- Ընկերությունների կարիքների համար ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերումները իրականացնել բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, և քննարկել պատասխանատու անձանց պատասխանատվության ենթարկելու հարցը:

ՀՀ Գեղարքունիքի մարզ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

- Մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին ավել է ֆինանսավորվել 15686.7 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

- Թվով 5 սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների կողմից նպաստառուներին ավել է վճարվել 4223.5 հազ. դրամի նպաստ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե: ՄԾՏԳ-ներում հայտնաբերվել են խախտումներ թվով 83 նպաստառուների գծով, որոնց անապահովության միավորի վերահաշվարկի արդյունքում նպաստառուների անապահովության միավորը նվազել է, սակայն անապահովության սահմանային միավորի վրա ազդեցություն չի ունեցել՝ պահպանելով նպաստ ստանալու իրավունքը:

- Առանց ծախսը հիմնավորող փաստաթղթերի մարզպետարանի կողմից կատարվել են ծախսեր, որոնք ենթակա են վերականգնման ՀՀ պետական բյուջե: Նշված ծախսերը կատարվել են խախտելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները և ՀՀ կառավարության 25.08.1998թ. թիվ 525 որոշման պահանջները:

- Մարզպետարանի կապիտալ ծախսերի համար հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգմամբ արձանագրվել են 24740.0 հազ. դրամի խախտումներ (նախահաշվի շինմոնտաժային արժեքի նկատմամբ պայմանագրային գների թանկացումներ,

ծավալաթերթ-նախահաշիվներով ավել նախատեսված, հսկիչ չափագրումների արդյունք, անորակ կատարված աշխատանքներ):

- Գնումների վերաբերյալ կնքված պայմանագրերի մասին հայտարարություններ տեղեկագրերում չեն հրապարակվել՝ խախտելով 06.12.2004թ. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 11 հոդվածի, 22.12.2010թ. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10 հոդվածի 1 կետի և ՀՀ կառավարության 17.12.2009թ. N 1521-Ն որոշմամբ հաստատված գնման առարկայի բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և գնումների ֆինանսավորման կարգի պահանջները:

- Խախտելով 06.12.2004թ. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի և 22.12.2010թ. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի պահանջները մարզպետարանի կողմից մասնատվել է գնման առարկան և կնքվել են առանձին պայմանագրեր՝ ապահովելով գնման արժեքի գնումների բազային միավորի չգերազանցման պահանջը: Արդյունքում ստուգվող ժամանակաշրջանում թվով 3 գնման առարկաների համար կատարվել են թվով 7 գնումներ՝ ընդհանուր գումարով 4201.0 հազ. դրամի:

Առաջարկվել է.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում քննարկել ստուգման ակտով արձանագրված խախտումները և բացթողումները, ինչպես նաև ՀՀ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պահանջները չկատարելու հարցում պաշտոնատար անձանց իրենց պարտականությունների մեջ թերանալու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Ապահովել.

ա) Մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին 15455.2 հազ. դրամ ավել ֆինանսավորված գումարի վերականգնումը (արձանագրվել է 15686.7 հազ. դրամ, որից վերականգնվել է 231.5 հազ. դրամ) ՀՀ պետական բյուջե:

բ) ՄԾՏԳ-ների կողմից նպաստառուներին ավել վճարված 4223.5 հազ. դրամ գումարի վերականգնումը ՀՀ պետական բյուջե և հայտնաբերված խախտումների գծով սահմանային միավորի վրա ազդեցություն չունեցող թվով 135 նպաստառուների անապահովության միավորները վերահաշվարկումը:

գ) Մշակութային միջոցառումների իրականացման հոդվածով առանց հիմնավոր փաստաթղթերի ծախսված 20.0 հազ. դրամի ՀՀ պետական բյուջե վերականգնումը:

դ) ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին առանց հիմնավոր փաստաթղթերի ծախսված 2300.0 հազ. դրամի ՀՀ պետական բյուջե վերականգնումը:

ե) Մարգպետարանի կապիտալ ծախսերի գծով ավել վճարված 16286.8 հազ. դրամի (արձանագրվել է 24740.0 հազ. դրամ, որից կատարված աշխատանքների տեսքով վերականգնվել է 8453.2 հազ. դրամ) վերականգնումը:

2. Այսուհետ պահպանել <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 25.08.1998թ. թիվ 525, 21.12.1998թ. թիվ 812, 30.10.1996թ. թիվ 346, 17.12.2009թ. թիվ 1521-Ն և 09.04.2009թ. թիվ 368-Ն որոշումների պահանջները:

3. Գնումների գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնք

Արձանագրվել է.

- Համայնքի կողմից դոտացիայի ստացման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հողի հարկի և գույքահարկի ելակետային տվյալների անճշտություններ, ինչի արդյունքում հնարավոր են ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաների ոչ ճիշտ հաշվարկման դեպքեր:
- Համայնքի հողի հարկի և գույքահարկի բազաներից դուրս են մնացել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որի հետևանքով պակաս գումարներ են գանձվել, ինչի արդյունքում համայնքի բյուջեի նկատմամբ գոյացել են ապառքներ:

- Համայնքում պետության կողմից պատվիրված լիազորությունների իրականացման նպատակով հատկացված միջոցների օգտագործման խախտման դեպքեր, ինչի արդյունքում առաջացել են ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ:
- Բացահայտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով իրականացված գնումներ:
- Խախտելով «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ. թիվ 934-Ն հրամանով սահմանված ներքին աուդիտի անցկացման կարգի պահանջները չեն կազմվել տարեկան աուդիտի անցկացման ծրագրեր, քաղաքապետարանում, ինչպես նաև ենթակա հիմնարկներում չի իրականացվել աուդիտ:

Առաջարկվել է.

1. Ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկների համար ՀՀ Ֆինանսների նախարարությանը տրամադրված գույքահարկի և հողի հարկի գծով պակաս ներկայացված ելակետային տվյալները ճշտել և ճշտված տարբերակները ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարությանը:

2. Ձեռնարկել միջոցներ համայնքի բյուջեի հարկային և ոչ հարկային եկամուտների աղբյուրների ճիշտ հաշվառման և ամբողջությամբ հավաքագրման ուղղությամբ:

3. Ձեռնարկել միջոցներ արձանագրված գումարները ՀՀ պետական և համայնքային բյուջեներ վերականգման ուղղությամբ:

4. Ձեռնարկել միջոցներ համայնքի համապատասխան աշխատանքները «Գնումների մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների պահանջներին համապատասխան կազմակերպելու ուղղությամբ:

5. Ապահովել «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող իրավական ակտերի պահանջներին համապատասխան ներքին աուդիտի ստորաբաժանման կայացումը և աշխատանքների բարձր արդյունավետությամբ իրականացումը:

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ

«Ճամբարակի առողջության կենտրոն» ՓԲԸ

1. Հիվանդանոցային բուժօգնության ծառայությունների գծով թերապևտիկ, վիրաբուժական, մանկական, մանկաբարձագինեկոլոգիական և ինֆեկցիոն բաժանմունքներում հիվանդների բուժման ընթացքում խախտվել են “Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ առողջապահության նախարարության և ՓԲԸ-ների միջև կնքված պայմանագրերին կից հատուկ պայմանների պահանջները՝ հիվանդների բուժման համար անհրաժեշտ դեղամիջոցները և բժշկական պարագաները ընկերությունների կողմից ապահովվել են մասնակի կամ ոչ ամբողջությամբ:

2. Հիվանդանոցային բժշկական օգնության առանձին ծրագրի գծով փաստացի կատարված աշխատանքների դիմաց ՀՀ ԱՆ ՊԱԳ-ի կողմից ավել աշխատանքների ծավալ ընդունելու արդյունքում ավել ֆինանսավորում է հատկացվել:

3. Արտահիվանդանոցային բուժօգնության ծառայությունների գծով ստուգվող ժամանակահատվածում ընկերությունների կողմից ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամաններով հաստատված չափորոշիչների պահանջները խախտելու եւ առանձին դեպքերում չափորոշիչով սահմանված պարտադիր հետազոտությունները «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» եւ «Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերի գծով նախատեսվածից պակաս կատարելու, «Լաբարատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի շրջանակներում առանձին հետազոտությունների գծով ՀՀ ԱՆ ՊԱԳ ներկայացված հաշվետվություններում ավել կատարողական ներկայացնելու արդյունքում ստուգվող ժամանակաշրջանում արտահիվանդանոցային բժշկական օգնության մասով ՀՀ պետական բյուջեից ավել ֆինանսավորում է հատկացվել:

4. Գնումների գործընթացի ճշտության և օրինականության ստուգմամբ պարզվել է, որ “Ճամբարակի Ա/Կ” ՓԲԸ-ն գնումներ կատարելիս (բացառությամբ դեղորայքի և բժշկական պարագաների ու վառելանյութի) չի առաջնորդվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով և չի կիրառել գնման համապատասխան ընթացակարգեր:

5. Շահութաբաժինների հաշվարկման և ժամանակին ՀՀ պետական բյուջե վճարման, ինչպես նաև զուտ շահույթի բաշխման ճշտության ստուգմամբ պարզվել է, որ հիմնադրի (ընկերության ընդհանուր ժողովի) կամ լիազոր մարմնի կողմից «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի ժբ) ենթակետի պահանջներին համապատասխան ընկերությունների տարեկան գործունեության արդյունքներով ստացած զուտ շահույթի (վնասի) բաշխում չի կատարվել՝ շահույթի բաշխման վերաբերյալ համապատասխան որոշումներ չեն կայացվել:

6. Ստուգմամբ կուտակված վնասի մեծությունը ճշտելուց հետո ընկերությունների գործունեության արդյունքներով առաջացել է շահութաբաժնի հաշվարկման բազա եւ ընկերությունները հանդիսացել են շահութաբաժին վճարող:

Առաջարկվել է.

- Մարզպետարանում քննության առնել ստուգման նյութերը, միջոցներ ձեռնարկել ստուգմամբ արձանագրված խախտումների ու թերությունների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

- Ուժեղացնել հսկողությունը ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված չափորոշիչների պահանջների պահպանման ուղղությամբ:

Հանձնարարել ընկերություններին.

- Պետական պատվերի շրջանակներում կատարված անվճար բժշկական օգնության եւ սպասարկման աշխատանքների գծով ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարները փոխանցել ՀՀ պետական բյուջեի «Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեի ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարի վերադարձ» գանձապետական հաշվին:

- Արձանագրված լրացուցիչ շահութաբաժնի գումարները փոխանցել ՀՀ պետական բյուջեի «Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներ» գանձապետական հաշվին:

- ՀՀ պետական բյուջեին հասանելիք շահութաբաժինները հաշվարկելիս խստագույնս առաջնորդվել ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի թիվ 202-Ն եւ 2006թ. հունիսի 22-ի թիվ 1238-Ն որոշումների պահանջներով:

- Ապահովել ՀՀ ԱՆ և Ընկերությունների միջև պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրերին կից հատուկ պայմանների կատարումը:

- Ընկերությունների կարիքների համար ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերումները իրականացնել բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

IV. ՀՀ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՁՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ իրավապահ մարմինների 2012թ. և 2013թ. ներկայացված պահանջով իրականացված ստուգումներով արձանագրված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝ աղյուսակի տեսքով:

ՍՏՈՒԳՄԱՆ ՀԻՄՔԸ	Արձանագրվել է	Ենթակա է վերականգնման կամ վերաձևակերպման
	(հազ. դրամ)	
1	2	3
2012թ. և 2013թ. պահանջ	717,551.1	383,571.2

V. ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2013թ. ընթացքում Տեսչության կողմից համապատասխան աշխատանքներ են տարվել ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականների պատշաճ կատարման ուղղությամբ: Այսպես.

1. ՀՀ վարչապետի 20.05.2013թ. թիվ 02/23.6/6904-13 հանձնարարականի հիման վրա ՀՀ մարզերում (Կոտայքի, Գեղարքունիքի, Արարատի և Շիրակի) իրականացվել են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2012 և 2013 թթ. գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար մատչելի գներով դիզելային վառելանյութի և ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրերի կատարման ընթացքի ուսումնասիրություններ:

Ուսումնասիրություններն իրականացվել են թվով 90 համայնքների թվով 1620 հողօգտագործողների (շահառուների) հետ իրականացված հարցումների միջոցով և արդյունքները ամփոփվել են ՀՀ Շիրակի, Արարատի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզպետարաններում իրականացված ստուգումներով կազմված համապատասխան ակտերով:

Ստուգումներով արձանագրված փաստերը լրացուցիչ քննության ենթարկելու նպատակով նյութերը ներկայացվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն: Հարուցվել է քրեական գործ:

2. ՀՀ վարչապետի 20.05.2013թ. թիվ 02/23.6/6906-13 հանձնարարականի հիման վրա ՀՀ մարզերում իրականացվել են.

ա/ Առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության 2011-2013 թվականների ՀՀ պետական բյուջեներով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից միջոցների հատկացման և ծախսման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն:

բ/ Կապիտալ ծախսերի, մասնավորապես, շենքերի և շինությունների շինարարության և կապիտալ վերանորոգման իրականացման նպատակով <<ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով նախատեսված միջոցների հատկացման և ծախսման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրություններ են իրականացրվել ՀՀ Արարատի, Կոտայքի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում: Քանի որ, ՀՀ վարչապետի 27 նոյեմբերի 2012թ. թիվ 1159-Ա որոշմամբ հաստատված ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2013թ. ծրագրով ՀՀ Լոռու և Գեղարքունիքի մարզպետարաններում նախատեսված էր իրականացնել 2010-2013թթ ժամանակահատվածի ստուգումներ, վերը նշված ուսումնասիրությունները երկու մարզերում իրականացվել են նախատեսված ստուգումների ընթացքում: Արդյունքում ՀՀ Լոռու և Գեղարքունիքի մարզերում ուսումնասիրությունները ամփոփվել են ՀՀ Լոռու և Գեղարքունիքի մարզպետարանների ստուգման ակտերում:

ՀՀ Արարատի, Կոտայքի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով արձանագրվել են նախագծանախահաշվային փաստաթղթերում աշխատանքների ծավալների, նյութերի գների, աշխատավարձի և մեքենա- մեխանիզմների միավոր արժեքների տվյալների ոչ ճիշտ կիրառման միջոցով նախահաշիվների ուճացման և արդյունքում սահմանված գործող գներով շինարարական աշխատանքների արժեքից ավել գներով պայմանագրերի կնքման, կատարողական ակտերով ավել գումարների վճարման, փաստացի չկատարված (սակայն դրանց դիմաց վճարված) աշխատանքների փաստեր, գործող մի շարք իրավական ակտերով սահմանված պահանջների խախտումներ:

Նշենք, որ հանձնարարականի շրջանակներում ՀՀ Արարատի մարզպետարանում իրականացված ուսումնասիրությունների ընթացքում Արտաշատի քաղաքային լճի վերակառուցման և շրջակա տարածքի բարեկարգման աշխատանքների ստուգման արդյունքում կազմվել է միջանկյալ ակտ, որն ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությանը: Հարուցվել է քրեական գործ:

3. ՀՀ վարչապետի 09.07.2013թ. թիվ 02/23.6/9823-13 հանձնարարականի հիման վրա իրականացվել են 2012 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2013 թվականի հունիսի 1-ը ընկած ժամանակահատվածի համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունում և ՀՀ ԿԱ պետական

եկամուտների կոմիտեում, Երևանի քաղաքապետարանի ենթակայության թվով 8 պոլիկլինիկաներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության <<հղիության և ծննդաբերության նպաստ>> և <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստ>> ծրագրերով կատարված ծախսերի ուսումնասիրություններ:

Ուսումնասիրություններով արձանագրվել են տարաբնույթ փաստեր, որոնք հիմք են տալիս գործատուների կողմից վարձու աշխատողներին վճարված որոշակի քանակի նպաստները և հարկային տեսչությունների կողմից անհատ ձեռնարկատերերին ու նոտարներին տրամադրված ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդող տարվա՝ օրենքով սահմանված կարգով սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի մասին որոշ տեղեկանքներում նշված եկամուտների մասին տեղեկատվության հիմնավորվածությունը դիտարկել որպես ռիսկային:

Ուսումնասիրությունների շրջանակներում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունում ուսումնասիրվել է վարձու աշխատողների գծով եկամուտների աճ ապահոված գործատուների վերաբերյալ տվյալների հիմնավորվածությունը:

Ուսումնասիրությունների արդյունքում ռիսկային դիտարկված փաստերը լրացուցիչ քննության ենթարկելու նպատակով նյութերը ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

ՀՀ իրավապահ մարմինների պահանջով և ՀՀ վարչապետի հանձնարարականներով կատարված սրուգումների ամփոփ արդյունքները ներկայացված են կից՝ հավելված 1-ում:

VI. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՕԳՏԻՆ ԲՌՆԱԳԱՆՁՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ, ԲՌՆԱԳՐԱՎՎԱԾ, ՀՕԳՈՒՏ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԻՐԱԶՈՒՐԿ ՃԱՆԱԶՎԱԾ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆՆ ԱՆՑԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ ԴԱՀԿ ծառայություն) կողմից 2013թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեի օգտին բռնագանձված ընդհանուր գումարը կազմում է 3,461,297.7 հազ. դրամ, այդ թվում՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գծով՝ 2,414,917.0 հազ. դրամ, ՀՀ դատախազության հայցերով՝ 31,609.3 հազ. դրամ, ՀՀ ֆինանսների նախարարության հայցերով՝ 3,095.9 հազ. դրամ, այլ բնույթի վարույթներով՝ 24,996.8 հազ. դրամ, պետական տուրքերով, տուգանքներով և գույքի բռնագրավումներով՝ 986,678.7 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 18.02.2010թ. «Բռնագրավված, հոգուտ պետության տիրագուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած նյութական ու դրամական արժեքներն օգտագործելու և դրանք հանձնելու, հաշվառելու և ոչնչացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 4-ի N 494 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 146-Ն որոշման համաձայն, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից յուրաքանչյուր եռամսյակ հաշվետվություն է ներկայացվում ՀՀ ֆինանսների նախարարություն՝ բռնագրավված, հոգուտ պետության տիրագուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած նյութական ու դրամական արժեքների (այսուհետ՝ Գույք) իրացման վերաբերյալ:

Ստորև ներկայացվում է 2013 թվականի ընթացքում ԴԱՀԿ ծառայության կողմից ներկայացված հաշվետվությունների ամփոփ պատկերը:

2013 թվականի ընթացքում ԴԱՀԿ ծառայության կողմից իրականացվել է ինչպես նախկինում, այնպես էլ հաշվետու տարում հարուցված ընդհանուր թվով 99 կատարողական վարույթ՝ տարբեր իրավասության դատարանների /Մալաթիա-Սեբաստյա, Կենտրոն և Նորք-Մարաշ, Շենգավիթ, Էրեբունի և Նուբարաշեն, Արաբկիր և Քանաքեռ - Զեյթուն վարչական շրջանների, Արարատի, Սյունիքի, Լոռու, Գեղարքունիքի, Տավուշի, Կոտայքի, Վայոց Ձորի, Արմավիրի, Արագածոտնի մարզերի / կողմից կայացված դատական ակտերի հիման վրա տրված կատարողական թերթերով: Ընդ որում, բռնագրավվել, հոգուտ պետության տիրագուրկ է ճանաչվել և/կամ ժառանգության իրավունքով պետությանն է

անցել ամենատարբեր գույք, այդ թվում՝ հագուստ, բջջային հեռախոսներ, փայտանյութ, ավտոմեքենաներ, սննդամթերք, դեղորայք, զենք, զինամթերք, ոսկի, արծաթ, փայտանյութ և այլն:

Իրականացված ընդհանուր թվով 99 կատարողական վարույթներից հաշվետու տարում ավարտվել /կարճվել/ է թվով 65-ը, որից.

- թվով 34 կատարողական վարույթով Գույքը վաճառվել է և իրացումից ստացված հասույթը փոխանցվել է ՀՀ պետական բյուջե,
- թվով 3 կատարողական վարույթ ավարտվել է համաձայն ‘ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, այն է՝ իրեղեն ապացույցը ոչնչացվել է,
- թվով 17 կատարողական վարույթ կարճվել է Գույքը համապատասխան մարմիններին /թվով 9 կատարողական վարույթներով ստրճանակ, փամփուշտներ, պայթուցիկ նյութեր և ավտոմեքենա հանձնվել է ՀՀ ոստիկանություն, թվով 5 կատարողական վարույթներով արծաթյա ու ոսկյա իրեր և ավտոմեքենա հանձնվել է պետությանը, թվով 1 կատարողական վարույթով արծաթյա իրեր հանձնվել է ՀՀ ֆինանսների նախարարություն, թվով 1 կատարողական վարույթով դեղորայք է հանձնվել “Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն” ՓԲԸ-ին, թվով 1 կատարողական վարույթով ստրճանակ է հանձնվել ՀՀ պաշտպանության նախարարություն/ հանձնելու հիմքով:
- թվով 11 կատարողական վարույթ կարճվել է առգրավված կամ իրեղեն ապացույց հանդիսացող դրամական միջոցները պետությանը / ՀՀ պետական բյուջե/ հանձնելու հիմքով:

2013 թվականի ընթացքում իրականացված վերը նշված կատարողական վարույթների արդյունքում հաշվետու տարվա վերջում պետությանն անցած գույքի մնացորդի ընդհանուր արժեքը կազմել է 30,251.5 հազ. դրամ, կատարողական գործողությունների ծախսերը՝ 414.0 հազ. դրամ,

պետական բյուջե փաստացի փոխանցված գումարը՝ 30,978.7 հազ. դրամ:

2013 թվականի արդյունքներն ամփոփելով, նշենք, որ բյուջեի կառավարման հսկողության ընթացքում Տեսչության կողմից բացահայտված ռիսկերը վերահսկողության ներքո գտնվող մարմինների կողմից թերի կամ անարդյունավետ կառավարման և թույլ հսկողության հետևանքով թույլ տրվող խախտումների ու թերությունների արդյունք են:

Խախտումների և թերությունների վերացմանն ու ռիսկերի հետագա զսպմանն ուղղված համապարասիան առաջարկություններով յուրաքանչյուր սրուգման ավարտից հետո սրուգված կազմակերպություն և/կամ պարկան վերադաս մարմին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գրություններ են հասցեագրվել և հսկողություն է իրականացվել վերջիններիս կողմից ձեռնարկվող միջոցառումների նկատմամբ:

Պարասիանարու մարմինների կողմից խախտումների վերացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ պարբերաբար սրացվող տեղեկատվության համաձայն՝ համապարասիան պաշտոնաբար անձանց տրվել են հանձնարարականներ, անհրաժեշտության դեպքում խախտում թույլ տված անձինք ենթարկվել են պարասիանարվության, արձանագրված գումարային խախտումների վերականգնման նպատակով կազմվել են ժամանակացույցեր, ներկայացվել են փաստացի վերականգնված գումարները հիմնավորող փաստաթղթերը: